

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>4.17 ԿԵՆՍԱԿԵՐՊ և ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	<b>4.17-3</b>
4.17.1 Զբաղվածության և աշխատանքի ազգային կառուցվածքը .....	4.17-4
4.17.2 Կենսակերպը ուսումնասիրության տարածքում .....	4.17-9
4.17.3 Հանքարդյունաբերություն .....	4.17-12
4.17.4 Մասնավոր հատված (ոչ հանքարդյունաբերական).....	4.17-13
4.17.5 Հասարակական հատված .....	4.17-14
4.17.6 Գյուղատնտեսություն.....	4.17-14
4.17.7 Հողագործություն.....	4.17-14
4.17.8 Անասնապահություն.....	4.17-16
4.17.9 Զբոսաշրջության սեկտոր .....	4.17-20
4.17.10 Բնական պաշարների օգտագործումը .....	4.17-34
4.17.11 Ձկնորսություն .....	4.17-34
4.17.12 Տնտեսական այլ գործունեություններ .....	4.17-34
4.17.13 Կենսակերպի գործունեությունից ստացված եկամուտը .....	4.17-35
4.17.14 Հմտություններ.....	4.17-38

## ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Աղյուսակ 4.17.1 Զբաղվածության ցուցանիշները Հայաստանի համար .....	4.17-3
Նկար 4.17.2: Զբաղվածությունն ըստ արդյունաբերության և սեռի (%) .....	4.17-6
Աղյուսակ 4.17.3. Զբաղվածությունն ըստ մարզերի .....	4.17-8
Աղյուսակ 4.17.4. Միջին աշխատավարձը ըստ ոլորտի .....	4.17-8
Աղյուսակ 4.17.5 Ուսումնասիրվող տարածքի ընտանի անասունների քանակ (2014).....	4.17-16
Աղյուսակ 4.17.6. Գյուղատնտեսական առևտուր (2010)* .....	4.17-17
Աղյուսակ 4.17.7 Ջերմուկի և Վայքի հյուրանոցները.....	4.17-21
Աղյուսակ 4.17.8. 2008թ. Զարգացման համապարփակ պլանի նկարագիրը.....	4.17-24
Աղյուսակ 4.17.9 Ուսումնասիրության տարածքի կենսաթոշակատուները* .....	4.17-35
<i>Աղյուսակ 4.17.8. Ուսումնասիրված տարածքում ինքնահայտարար</i> .....	4.17-39
Աղյուսակ 4.17.10. Ինքնահայտարարված հմտությունները ուսումնասիրության տարածքում (2011թ.) <i>հմտություններ</i> .....	4.17-39
Աղյուսակ 4.17.11 Հմտությունների հետազոտության նախնական արդյունքներ – .....	4.17-42

## ՆԿԱՐՆԵՐ

Նկար 4.17.1. Զբաղվածությունն ըստ արդյունաբերության տեսակի .....	4.17-5
Նկար 4.17.2. Զբաղվածությունն ըստ ոլորտի.....	4.17-5
Նկար 4.17.3. Միջին աշխատավարձը ըստ ոլորտի (դրամ, 2009թ) .....	4.17-9
Նկար 4.17.4. Կենսակերպն ըստ մարզերի .....	4.17-10
Նկար 4.17.5. Կենսակերպի աղբյուրները գյուղական համայնքներում (2010թ.) .....	4.17-11

Նկար 4.17.6. Կենսակերպի աղբյուրները Ջերմուկում և Կեչուտում (2010թ.) .....	4.17-11
Նկար 4.17.7 Գյուղապետերի կողմից զեկուցված զբաղվածության բաշխվածությունը (2014թ.)	4.17-12
Նկար 4.17.8. Գյուղական համայնքներում մշակվող բույսեր .....	4.17-15
Աղյուսակ 4.17.9 Սենյակների առկայությունը Ջերմուկում օրացուցային տարվա կտրվածքով	4.17-20
Աղյուսակ 4.17.10 Ջերմուկի հյուրանոցային համալիրների դիրքերը.....	4.17-21
Նկար 4.17.11. Գյուղական համայնքների միջին ամսական եկամուտ (2010թ.).....	4.17-36
Նկար 4.17.12. Ուսումնասիրության տարածքում անասնապահությունից ստացված տարեկան եկամուտը.....	4.17-37
Նկար 4.17.13. Ֆինանսական կացության ընկալումը .....	4.17-38
Նկար 4.17.14. Հարցվողների կրթական աստիճանը համայնքներում .....	4.17-40
Նկար 4.17.15. Վարորդական իրավունքի կարգը և տոկոսային քանակը .....	4.17-42

### **ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**

Հավելված 4.17.1 Էթնոբուսաբանական հետազոտություն (2013թ.)

Հավելված 4.17.2 Հնտությունների ստուգում (2014թ.)

**4.17 Կենսակերպ և զբաղվածության հնարավորություններ**

2015թ. Միավորված Ազգերի Մարդկային Ներուժի Ջարգացման զեկույցի կիզակետում է աշխատանքի դերը զարգացման մեջ: Դրան աջակցելու համար Հայաստանում զբաղվածության ցուցանիշները զեկույցվեցին Հայաստանի<sup>1</sup> համար մամլո ասուլիսի ժամանակ և ամփոփվեցին 4.17.1: Տվյալները ցույց են տալիս Հայաստանում զբաղվածության առումով գյուղատնտեսության կարևորությունը, ինչպես նաև ընդգծում են գործազրկության բարձր մակարդակը երիտասարդների շրջանում այլ երկրների համեմատ:

<b>Աղյուսակ 4.17.1 Ջբաղվածության ցուցանիշները Հայաստանի համար</b>			
<b>Ջբաղվածության ցուցանիշները</b>	<b>Հայաստան</b>	<b>Բարձր ՄՁՆՑ</b>	<b>Եվրոպա և Կենտրոնական Ասիա</b>
Աշխատուժի մասնակցության մակարդակը (% 15 տարեկան և բարձր)	63.4	67.1	57.2
<i>Իզական</i>	<i>54.2</i>	<i>57</i>	<i>45.6</i>
<i>Արական</i>	<i>72.6</i>	<i>77.2</i>	<i>70.0</i>
Ջբաղվածության բաշխումը գյուղատնտեսության մեջ (% ընդհանուր զբաղվածությունից)	38.9	28.8	24.5
Ջբաղվածության բաշխումը ծառայություններ մատուցելու ոլորտում (% ընդհանուր զբաղվածությունից)	44.4	43.8	52.5
Բարձրագույն կրթություն ունեցող աշխատուժ (%)	22.9	-	-
Ընդհանուր գործազրկություն (% աշխատուժից)	18.4	4.7	9.9
Երկարատև գործազրկություն (% աշխատուժից)	9.7	-	-
Գործազրկությունը երիտասարդների շրջանում (% երիտասարդների աշխատուժից)	36.0	16.7	19.5
Աշխատող աղքատներ, Գնողունակության համարժեքություն \$2 օրական (% ընդհանուր զբաղվածությունից)	12.2	14.7	3.8

<sup>1</sup> ՄԱԶԾ. Մարդկային ներուժի զարգացման զեկույց 2015 թ., Աշխատանք՝ մարդկային ներուժի զարգացման համար, նշում երկրների համար մամլո ասուլիսից 2015 թ., Նյու Յորք, ԱՄՆ, 2015

2009թ. 12 ամիս տևողությամբ Կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն (SSYUՀ, ILCS)<sup>2</sup> իրականացվեց բոլոր մարզերում: Այս հետազոտության արդյունքները ներկայացնում են Հայաստանի կենսակերպը հետևյալ ամփոփ նկարագրում:

2009թ. Հայաստանի բնակչության դե ֆակտո աշխատանքային ռեսուրսը 2.4 միլիոն էր կազմում (15-75 տարեկան), որը կազմում էր բնակչության ընդհանուր թվի մոտավորապես 77%-ը: Այս խմբում տղամարդիկ կազմում էին 45%, իսկ կանայք՝ 55%, քաղաքաբնակները կազմում էին 66%, իսկ գյուղական տարածքների բնակիչները՝ 34%: Աշխատանքային ռեսուրսի այս խմբում աշխատանքի մասնակցության ցուցանիշը կազմում էր 59% (69% տղամարդկանց և 51% կանանց համար): Գործազրկությունը կազմում էր 18.7% 2009 թ.՝ առանց գենդերային զգալի կողմնակալության կամ տարբերության, և այս ցուցանիշը փոքր-ինչ կրճատվեց (18.4%) 2014թ.

Հայերի գերակշռող մեծամասնությունը (մոտավորապես 97%) ունի միայն մեկ աշխատանք, և այս զբաղվածության զգալի մեծամասնությունը համարվում է “ոչ պաշտոնական” (52.1%): Աշխատանքի միջազգային կազմակերպության դասակարգման համաձայն, Հայաստանում գյուղատնտեսական գործունեության մեծ մասը համարվում է ոչ պաշտոնական: Այդ պատճառով էլ զարմանալի չէ, որ ոչ պաշտոնական զբաղվածության մեծ մասը (82%) գյուղական վայրերում է:


Բացի զբաղվածության հնարավորություններից, դրամական փոխանցումները կարևոր դեր են խաղում տնային տնտեսությունների եկամուտում, որոնց մինչև 20%-ը որևէ տեսակի դրամական փոխանցումներ է ստանում՝ 2004-2009թթ. ընկած ժամանակաշրջանում կազմելով միջինը ՀՆԱ-ի 16%-ը<sup>3</sup>:

#### **4.17.1 Զբաղվածության և աշխատանքի ազգային կառուցվածքը**


Հայաստանում զբաղվածության ամենաբարձր մասնաբաժինը գրանցված է գյուղատնտեսության ոլորտում, որին հաջորդում են արդյունաբերությունը, կրթությունը և մեծածախ ու մանրածախ առևտուրը (ինչպես ցուցադրված է Նկարներ 4.17.1 և 4.17.2-ում):

<sup>2</sup> SSYUՀԱՈՒ-ի (ILCS) տվյալները գեկուցվել են ԱԶԲ-ի շրջանակներում (2011թ.), Ոչ պաշտոնական ոլորտն ու նրա զբաղվածությունը Հայաստանում, Երկրի մասին հաշվետվություն 2010թ., ԱԶԲ

<sup>3</sup> Արժույթի միջազգային հիմնադրամ (2012թ.), [www.imf.org/external/country/arm/rr/2012/062012.pdf](http://www.imf.org/external/country/arm/rr/2012/062012.pdf)



Նկար 4.17.1. Զբաղվածությունն ըստ արդյունաբերության տեսակի<sup>4</sup>



Նկար 4.17.2. Զբաղվածությունն ըստ ոլորտի<sup>5</sup>

<sup>4</sup> ԱԶԲ (2011թ.) Ոչ պաշտոնական ոլորտն ու նրա զբաղվածությունը Հայաստանում, Էրկրի մասին հաշվետվություն 2010թ.,

<sup>5</sup> Նույն աղբյուրից

Նկար 4.17.2-ն ընդգծում է հակումը դեպի այն դերերը կամ ֆունկցիաները, որոնք Հայաստանում կանանց կողմից ավանդաբար համարվում են «կանանց» աշխատանք (գյուղատնտեսություն, կրթություն, առողջապահություն և մանրածախ առևտուր): Զբաղվածության առավել մանրամասն բաշխումն ըստ արդյունաբերության, տեղանքի և սեռի բերված է Աղյուսակ Նկար 4.17.1-ում:

**Նկար 4.17.2: Զբաղվածությունն ըստ արդյունաբերության և սեռի (%)<sup>6</sup>**

Ոլորտ	Արդյունաբերություն	Զբաղվածության բնույթ						Ընդհանուր զբաղվածություն (1,000 աշխատատեղ)		
		Պաշտոնական			Ոչ պաշտոնական			Տղամարդ	Կին	Total
		Տղամարդ	Կին	Ընդ.	Տղամարդ	Կին	Ընդ.			
A	Գյուղատնտեսություն, որսորդություն ու անտառաբուծություն	4.2	2.7	6.9	223.7	257.2	480.8	227.8	259.9	487.7
B	Զվնորություն	0.1	0.0	0.2	0.1	0.0	0.1	0.2	0.0	0.2
C	Հանքարդյունաբերություն և քարհանքի շահագործում	7.4	2.1	9.5	0.1	0.0	0.1	7.5	2.1	9.7
D	Արտադրություն	41.5	13.2	45.6	8.5	7.3	15.8	50.0	20.4	70.4
E	Էլեկտրականություն, գազի և ջրի մատակարարում	29.5	4.7	34.2	0.4	0.3	0.7	29.8	5.0	34.9
F	Շինարարություն	33.6	1.2	34.8	47.6	0.5	48.1	81.2	1.7	82.9
G	Մեծածախ և մանրածախ առևտուր, վերանորոգումներ և այլն.	33.3	26.7	60.0	21.4	16.5	37.9	54.7	43.1	97.8
H	Հյուրանոցներ և ռեստորաններ	3.3	4.7	8.0	1.5	3.6	5.0	4.8	8.2	13.1
I	Տրանսպորտ, պահեստավորում և կապ	41.5	9.8	51.3	13.5	0.6	14.1	55.0	10.5	65.4
J	Ֆինանսական միջնորդություն	6.2	6.9	13.1	...	...	...	6.2	6.9	13.1
K	Անշարժ գույք, վարձակալություն և ձեռնարկատիրական գործունեություն	4.4	3.7	8.1	0.6	0.2	0.8	5.0	3.9	8.9

<sup>6</sup> Նույն աղբյուրից. 1, էջ 4.17.2

Նկար 4.17.2: Զբաղվածությունն ըստ արդյունաբերության և սեռի (%)<sup>6</sup>

Ոլորտ	Արդյունաբերություն	Զբաղվածության բնույթ						Ընդհանուր զբաղվածություն (1,000 աշխատատեղ)		
		Պաշտոնական			Ոչ պաշտոնական			Տղամարդ	Կին	Total
		Տղամարդ	Կին	Ընդ.	Տղամարդ	Կին	Ընդ.			
L	Հանրային կառավարում և պաշտպանություն, սոց. Ապահովագրություն	52.5	25.0	77.5	...	...	...	52.5	25.0	77.5
M	Կրթություն	20.7	86.5	107.2	0.2	1.1	1.3	20.9	87.6	108.5
N	Առողջապահություն և սոցիալական աշխատանք	10.4	51.2	61.6	0.1	0.2	0.2	10.5	51.4	61.8
O	Համայնքային սոցիալական և անհատական այլ ծառայություններ	23.0	17.8	40.8	7.8	5.0	12.9	30.8	22.9	53.7
P	Անհատ տնային տնտեսություններում զբաղված անձինք	0.3	0.4	0.6	1.1	2.8	3.8	1.3	3.2	4.4
Q	Արտատարածքային կազմակերպություններ	1.3	1.0	2.3	-	-	-	1.3	1.0	2.3
	Ընդամենը	313.1	257.5	570.7	236.4	295.3	621.7	639.5	552.8	1,192.3

Ծանոթագրություն.  
 ... = ռիտարկումներ/տվյալներ առկա չեն, ... = կիրառելի չէ

... = հետազոտություն չի կատարվել/տվյալները բացակայում են, - = չի կիրառվում

Գյուղատնտեսությունը, որսորդությունն ու անտառաբուծությունը կազմում են գյուղական վայրերի զբաղվածության 76%-ը: Ուսումնասիրության տարածքում գյուղատնտեսության կարևորությունն առավել ցայտուն է *Վայոց ձորի մարզում*, ուր համընդհանուր զբաղվածության 96%-ը գյուղատնտեսական է: Սյունիքի *մարզում* ընդհանուր առմամբ գյուղատնտեսությունը պակաս կարևորություն ունի (զբաղվածության 43%) հարավում հանքարդյունաբերական գործունեության պատճառով:

Աղյուսակ 4.17.3. Զբաղվածությունն ըստ մարզերի <sup>7</sup>						
Մարզ	Զբաղվածության բնույթը					
	Հազար			%		
	Պաշտոնական	Ոչ պաշտոնական	Ընդամենը	Պաշտոնական	Ոչ պաշտոնական	Գյուղատնտեսություն
Երևան	273.8	65.5	339.2	80.7	19.3	2.0
Արագածոտն	17.0	49.0	66.0	25.7	74.3	65.4
Արարատ	34.7	92.3	127.0	27.3	72.7	62.7
Արմավիր	28.3	85.6	113.9	24.8	75.2	64.1
Գեղարքունիք	27.2	66.1	93.3	29.1	70.9	65.4
Լոռի	42.9	64.2	107.1	40.1	59.9	51.3
Կոտայք	46.8	53.2	100.0	46.8	53.2	39.9
Շիրակ	37.5	48.9	86.5	43.4	56.6	53.0
Սյունիք	33.9	33.7	67.6	50.1	49.9	42.9
Վայոց Ձոր	9.8	14.7	24.5	40.1	59.9	95.9
Տավուշ	18.9	48.4	67.2	28.1	71.9	59.5
<b>Ընդամենը</b>	<b>570.7</b>	<b>621.7</b>	<b>1,192.3</b>	<b>47.9</b>	<b>52.1</b>	<b>40.9%</b>

Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում 2009թ. հաշվարկվել է 66 511 ՀՀ դրամ (161 ԱՄՆ դոլար)՝ տղամարդկանց և կանանց աշխատավարձերի միջև նկատվող էական տարբերությամբ (միջինում տղամարդիկ 53%-ով շատ են վաստակում կանանցից): Հստակ տարբերություն է նկատվում նաև Երևանում ու առհասարակ քաղաքային և գյուղական վայրերում աշխատավարձերի միջև. գյուղական վայրերում միջին աշխատավարձը մոտենում է Երևանի միջին աշխատավարձի մոտավորապես 60%-ին, ինչպես ներկայացված է Աղյուսակ 4.17.4-ում:


Աղյուսակ 4.17.4. Միջին աշխատավարձը ըստ ոլորտի <sup>8</sup>			
Զբաղվածության կարգավիճակ	Միջին վաստակ (դրամ)		
	Երևան	Քաղաք	Գյուղ
Գործառու	81, 653	67,653	64,736
Գործատու	240,661	205,011	91,909
Անկախ աշխատող անձինք	93,421	43,681	41,345
<b>Միջին աշխատավարձ</b>	<b>84,434</b>	<b>65,007</b>	<b>50,167</b>

<sup>7</sup> Նույն աղբյուրից. 1, էջ 4.17.2

<sup>8</sup> Նույն աղբյուրից. 1, էջ 4.17.2



Աշխատավարձերը զգալիորեն տարբերվում են նաև զբաղվածության ոլորտների միջև. հանքարդյունաբերությունն ու քարհանքները գրանցել են միջին աշխատավարձերից բարձրագույններից, ինչպես ներկայացված է Նկար 4.17.3-ում:




Նկար 4.17.3. Միջին աշխատավարձը ըստ ոլորտի (դրամ, 2009թ)<sup>9</sup>

**4.17.2 Կենսակերպը ուսումնասիրության տարածքում**

Հայաստանում տնային տնտեսությունների մեծ մասը եկամուտ է ստանում մի քանի աղբյուրներից: Նկար 4.17.4-ը ամփոփում է ազգային հետազոտության արդյունքները՝ յուրաքանչյուր մարզում բացահայտելու եկամտի աղբյուրները: *Վայոց ձորի և Մյունիքի մարզերն* առանձնանում են այն բանով, որ վարկերն ու պարտքերը եկամտի աղբյուր չեն, և դրամական փոխանցումները նույնպես ավելի քիչ կարևորություն ունեն այս մարզերում՝ համեմատած այլ տարածաշրջանների հետ: Հասարակական ոլորտի աշխատավարձերը էական նշանակություն ունեն այս *մարզերում*, և թեև տարածաշրջանում գյուղատնտեսությունը հանդիսանում է գերիշխող գործատու, դրա ներդրումը որպես եկամտի աղբյուր ավելի ցածր է, քան կարող էր սպասվել:

<sup>9</sup>Նույն աղբյուրից. 1



**Նկար 4.17.4. Կենսակերպի ըստ մարզերի<sup>10</sup>**

Էմ Փի Ջի (MPG) հայաստանյան խորհրդատվական ընկերությունը Գորայքում, Գնդեվազում, Սարավանում, Կեչուտում և Ջերմուկում 2010թ. իրականացրել է տնային տնտեսությունների ուսումնասիրություններ, որոնք սույն գլխում ներկայացված տվյալների մեծամասնության աղբյուր են հանդիսանում: Ի լրումն այս ուսումնասիրությունների, յուրաքանչյուր գյուղ ամեն տարի պատրաստում է «Գյուղի անձնագիր», որը ներառում է գյուղի վերաբերյալ հիմնական վիճակագրություն: Այդ տվյալները հավաքագրվել են համայնքի ղեկավարներից Լիդիանի կողմից և, որտեղ տվյալները համարվել են ճշգրիտ, կիրառվել են ըստ անհրաժեշտության:


Գյուղատնտեսությունը կենսակերպի գերակշիռ միջոց է գյուղական համայնքներում (Գնդեվազ, Գորայք և Սարավան<sup>11</sup>), ինչպես երևում է Նկար 4.17.5-ում: Շատերը նշել են, որ եկամուտ են ստանում նշված մի քանի աղբյուրներից, այլ ոչ թե մեկից, Ջերմուկում և Կեչուտում լրիվ դրույթով աշխատանքի կարևորությունը ակնհայտ երևում է Նկար 4.17.6-

<sup>10</sup> Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ, (2010թ.), Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը տնային տնտեսությունների վրա, Երևան


<sup>11</sup> MPG, (2010), Գորայք, Գնդեվազում և Սարավանում ելակետային ուսումնասիրություն

ում:

Թեև դրամական փոխանցումները կարևոր են ազգային մակարդակում, ուսումնասիրության տարածքի տնտեսությունում դրանց դերը կարծես սահմանափակ է:




Նկար 4.17.5. Կենսակերպի աղբյուրները գյուղական համայնքներում (2010թ.)<sup>12</sup>



Նկար 4.17.6. Կենսակերպի աղբյուրները Ջերմուկում և Կեչուտում (2010թ.)<sup>13</sup>

<sup>12</sup> Նույն աղբյուրից. 10, էջ 4.17.7

2014թ. տարածաշրջանի գյուղապետի հետ անցկացված հիմնական տեղեկատու հարցազրույցների ընթացքում ընդգծվել է գյուղատնտեսության կարևորությունը բոլոր համայնքների համար (տես Նկար 4.17.7): Ի տարբերություն Ջերմուկի՝ գյուղերը մեծապես կախված են գյուղատնտեսությունից:



Նկար 4.17.7 Գյուղապետերի կողմից զեկուցված զբաղվածության բաշխվածությունը (2014թ.)<sup>14</sup>

#### 4.17.3 Հանքարդյունաբերություն

Ներկայումս Սյունիքի մարզի հարավային հատվածը Հայաստանում հանքարդյունաբերական գործունեության կենտրոն է: Չնայած այն հարաբերականորեն մոտ է ուսումնասիրության տարածքին (մոտ 80-100 կմ), արձանագրված չի, որ վերջինիս աշխատողները Իրանի սահմանին հարող հանքավայրերում աշխատանք փնտրեն: Ծրագրի շրջանակներում տեղի բնակչությունից: 2014թ. նոյեմբերի դրությամբ Հայաստանում տեղական տարածքից ծրագրի շրջանակներում Լիդիանի կազմ էր ընդգրկված 33 (23 տղամարդ և 10 կին) մշտական և ևս 59 (37 տղամարդ և 22 կին) պայմանագրային աշխատակից: Այդ ընթացքում Լիդիանի կազմ էր ընդգրկված ընդհանուր առմամբ 99 աշխատակից. 92-ը Հայաստանում (ինչպես արդեն նշված է) և 7 (6 տղամարդ և 1 կին) արտերկրում: Այս տվյալները ցույց են տալիս, որ Լիդիանի

<sup>13</sup> MPG (2010թ.), Ջերմուկում և Կեչուտում ելակետային ուսումնասիրություն  
<sup>14</sup> Հիմնական տեղեկատու հարցազրույցներ համայնքների ղեկավարների հետ, 2014թ.

աշխատուժի ճիշտ մեկ երրորդը 2014թ.-ի վերջին կազմում էին կանայք:

#### **4.17.4 Մասնավոր հատված (ոչ հանքարդյունաբերական)**

Գնդեվազ, Գորայք և Սարավան գյուղական համայնքների եկամուտների 30%- 45%-ը վերագրվում է 2010թ. աշխատավարձով զբաղվածությանը: Սա ներառում է հասարակական և մասնավոր հատվածի զբաղվածությունը, այդ թվում նաև զբաղվածությունը Լիդիանում (որն ուսումնասիրության պահին կազմում էր մոտ 50 մարդ): Ի հակադրություն դրան, լրիվ դրույքով աշխատանքն ապրուստի գերիշխող աղբյուր է Ջերմուկում և Կեչուտում<sup>15</sup> (կազմում է եկամուտի մոտավորապես 70%-ը):

Տարածքում կան մասնավոր հատվածի համեմատաբար սակավաթիվ հնարավորություններ, որոնցից խոշոր գործատուներն են.

- Ջերմուկի հանքային ջրերի շշալցման գործարան (աշխատակիցների թվաքանակը սեզոնին տատանվում է, բայց պաշտոնապես այն գրանցված է 30-100 աշխատակցով),
- Ջրերի շշալցման Մայր գործարան (նմանապես, աշխատակիցների թվաքանակը սեզոնին տատանվում 15-50 աշխատակցով),
- Գնդեվազի անասնապահական ֆերմա (աշխատակիցների թիվը՝ 10 հոգի)
- “Աշտարակ կաթ” գործարան (Գորայք, աշխատում է ինը մարդ),
- Գազալցակայան Գորայքում. աշխատակիցների թվաքանակը կազմում է մոտ 6-12 աշխատող, և
- Ջերմուկի զբոսաշրջություն. ամռան ընթացքում Ջերմուկի բնակչությունն աճում է զբոսաշրջության աճի շնորհիվ, և մոտավորապես 450 ամառային աշխատատեղեր են գոյանում՝ աջակցելու զբոսաշրջության արդյունաբերությանը<sup>16</sup>: Ձմռան ընթացքում փոքր թվով աշխատատեղեր նույնպես գոյանում են, աջակցելու դահուկային համեստ ոլորտը: Այս աշխատատեղերի մեծ մասը զբաղեցնում են Ջերմուկի, Կեչուտի և Գնդեվազի բնակիչները:

Պատմականորեն Կեչուտը բնակարանային հիմք է եղել Կեչուտի ջրամբարը զարգացնող աշխատողների համար:

<sup>15</sup> Նույն աղբյուրից. 12,

<sup>16</sup> ԱՄՆ ՄԶԳ (2008) Զարգացման Համապարփակ Պլան: Ջերմուկը որպես Սպա և Ձմեռային զբոսաշրջության կենտրոն

#### **4.17.5 Հասարակական հատված**


Ինչպես վկայում է Նկար 4.17.5-ը, հասարակական հատվածի աշխատավարձերը մարզային մակարդակում կենսակերպի կարևոր մաս են կազմում: Չկան հասանելի տվյալներ հաստատելու ուսումնասիրության տարածքի այս միտումը, սակայն կարելի է ենթադրել, որ հասարակական հատվածի աշխատավարձերն էականորեն նպաստում են այս տարածքի բոլոր գյուղական և քաղաքային համայնքների լրիվ դրույքով զբաղվածությանը: Այս զբաղվածության հատվածը ներառում է գյուղական համայնքի վարչական անձնակազմը, ուսուցիչները, առողջապահության աշխատակիցներն ու ծառայություն մատուցողները (օրինակ՝ ջրի և սանիտարական սպասարկման անձնակազմ):

#### **4.17.6 Գյուղատնտեսություն**

Հայաստանում գյուղատնտեսությունը գյուղական կենսակերպի անկյունաքարն է, և ուսումնասիրության տարածքը չի տարբերվում ազգային այս նորմից: Գյուղատնտեսությամբ զբաղվում են թե ընտանիքները, թե անհատները՝ աշխատելով համայնքային կամ մասնավոր հողի վրա: Գյուղատնտեսությունը եկամուտի ամենամեծ աղբյուրն է Գորայքի, Գնդեվազի և Սարավանի գյուղական համայնքների համար (ինչպես ներկայացված է Նկար 4.17.5-ում): Գյուղատնտեսական եկամուտներն ընդհանուր առմամբ բաժանվում են հողագործության և անասնապահության միջև:

#### **4.17.7 Հողագործություն**

Որպես կանոն, ընտանիքներն այգի են մշակում կամ էլ հողակտոր, որի սեփականատերն են կամ էլ վարձակալում են համայնքի հողատարածքներից: Սովորաբար մշակվում են հիմնական սպառման մշակաբույսեր, ինչպիսիքն են ցորենն ու գարին, կարտոֆիլը (տես Նկար 4.17.7): Հողագործությունն իրականացվում է որպես ապրուստի հիմնական գործունեություն՝ եկամուտի համար վաճառվող շատ քիչ ավելցուկով: Այստեղ բացառություն է կազմում Գնդեվազը, որտեղ ծիրանը մշակվում է կոմերցիոն նպատակով: տնտեսությունների մոտ 18% մասնակցում է այդ գործողություններում:



Նկար 4.17.8. Գյուղական համայնքներում մշակվող բույսեր <sup>17</sup>

Ուսումնասիրության տարածքի գյուղական համայնքների բնակիչները որպես կանոն մշակում են տնամերձ բանջարեղենային այգիներ, որտեղ աճեցնում են կարտոֆիլ, լոլիկ, վարունգ, լոբի, գազար, սոխ և սխտոր՝ գերազանցապես ընտանիքի սպառման համար:

Կեչուտում գյուղատնտեսությունը նույնպես կարևոր է, թեև ավելի փոքր չափով: Գերակշռող բույսը Կեչուտում կարտոֆիլն է: Ջերմուկում գյուղատնտեսությունը որպես եկամուտի աղբյուր չի արձանագրվել (տես Նկար 4.17.6):

Գյուղական համայնքներում առկա է սահմանափակ քանակությամբ գյուղատնտեսական տեխնիկա՝ աջակցելու հողագործական գործունեությանը: Գորայքի գյուղական համայնքում Լիդիան Ինթերնեյշնլն աջակցել է գյուղատնտեսության բարելավման ծրագիր, իրականացնելով այն գործընկերոջ՝ HDP ՀԿ-ի միջոցով, 2012 թ. սկսած:

Բացի հողագործությունից, ուսումնասիրության տարածքում մեղվաբուծությունը նույնպես իրականացվում է ընտանիքների կողմից մեղրի սպառման համար:

<sup>17</sup> Նույն աղբյուրից. 10, էջ 4.17.7

Որպես 2010թ. իրականացված տնային տնտեսությունների ուսումնասիրությունների (MPG)<sup>18</sup> մաս համայնքի անդամների հետ հարցումները բացահայտեցին, որ պարարտանյութերը, սերմերը և վառելիքը գնային առումով դժվարամատչելի են: Սա տարածքի կայուն գյուղատնտեսության ցածր եկամտաբերության հիմնական պատճառն է, իսկ երկրորդ հիմնական պատճառը գյուղատնտեսական մթերքի համար լավ զարգացած շուկայի բացակայությունն է: Քանի որ MPG ընկերության տնային տնտեսությունների հետազոտության արդյունքները չեն ներառում կոնկրետ հարցեր շուկայական հասանելիության մասին, շուկայի ընդունված հասանելիության քանակական ցուցանիշները բացակայում են:

**4.17.8 Անասնապահություն**

Ուսումնասիրության տարածքի գյուղական համայնքների տնային տնտեսությունների մեծ մասն արձանագրել է, որ մեծապես ապավինում է անասնապահությանը որպես եկամուտի աղբյուր. Աղյուսակ 4.17.5-ը ամփոփում է ընտանի անասնաքանակի սեփականությունը համայնքներում: Ավելի քան երեք անգամ ավել գյուղատնտեսական հողերի առկայությամբ, համեմատելով այլ գյուղական համայնքների հետ, զարմանալի չէ, որ Գորայքն ունի ընտանի անասնաքանակի շատ ավելի մեծ քանակ: Անասնապահությունը նույնպես տարածված է Կեչուտում, սակայն գյուղն ավելի քիչ է դրանից եկամուտ քաղում:

Աղյուսակ 4.17.5 Ուսումնասիրվող տարածքի ընտանի անասունների քանակ (2014) <sup>19</sup>				
Կենդանիներ	Գորայք	Սարավան	Գոդեվազ	Չերմուկ
Կովեր	653	180	570	630
Ոչխարներ և այծեր	1048	350	1206	420
Ավանակներ	2	0	13	1
Զիեր	28	8	11	26
Ընտանի թռչուններ	1222	453	20000	760
Նապաստակներ և ճագարներ	0	0	114	65
Մեղվի փետակներ	377	511	309	350
Այլ	22	31	290	110

<sup>18</sup> Նույն աղբյուրից  
<sup>19</sup> Նույն աղբյուրից, 10, և նույն աղբյուրից. 12,



Անասնապահական գործունեությունը որպես կանոն իրականացվում է ընտանիքների կողմից, երբ ընտանիքի անդամների միջև աշխատանքի բաշխում է կատարվում. օրինակ՝ լվանալ, կերակրել, կթել, խոտ հավաքել և արածեցնել: Լվանալն ու կթելը որպես կանոն կանանց տիրույթն են, իսկ տղամարդիկ վերահսկում են արածեցնելը և այլ դաշտային աշխատանքները: Որոշ դեպքերում գյուղական համայնքներում հարուստ ընտանիքները հովիվ են վարձում նույն գյուղական համայնքից՝ նախիրը արածեցնելու համար:

Խոշոր եղջերավոր անասուններ ուսումնասիրության տարածքում պահում են հիմնականում կաթնամթերքի արտադրության համար՝ կաթը վաճառելով Գորայքում գտնվող “Աշտարակ կաթ” գործարանին: “Աշտարակ կաթ”-ը կազմակերպում է կաթի հավաք Գորայքից և Սարավանից և դրանց հարակից տարածքներից: Կաթի հավաքման կետի բացակայությունը հիմնական խոչընդոտն է Կեչուտի և Գնդեվազի բնակիչների համար: Բացի դրանից, Գնդեվազի և Կեչուտի կլիման և տեղադրությունը պակաս բարենպաստ են անասնապահության համար:

Գուղական համայնքներում գոյություն ունի գյուղատնտեսական փոքրածավալ առևտուր. հարցման մասնակիցների մոտավորապես 50%-ը նշել է, որ անցած 2009թ. ընթացքում գնել կամ վաճառել է գյուղատնտեսական մթերք: Կովերը, տնային թռչուններն ու ոչխարները վաճառվել են Գորայքում, Սարավանում և Գնդեվազում, իսկ Սարավանի բնակիչներն արձանագրել են խոզերի առք ու վաճառք:

<b>Սղյուակ 4.17.6. Գյուղատնտեսական առևտուր (2010)*<sup>20</sup></b>			
<b>Գյուղական համայնք</b>	<b>Վաճառված</b>	<b>Փոխանակված</b>	<b>Սպառված</b>
<b>Սարավան</b>	68.5%	3.7%	57.4%
<b>Գորայք</b>	1.3%	16.5%	36.7%
<b>Գնդեվազ</b>	31.9%	3.5%	75.2%
<b>Կեչուտ</b>	8.2%	11.5%	80.3%

Ծանոթագրություն. այս տոկոսներն արտացոլում են դրական պատասխանների հարաբերակցությունը: Որոշ հարցվողներ դրական պատասխան են տվել նույն հարցի մի քանի տարբերակներին: Մովորաբար դրանք հաշվի չեն առնվում:

<sup>20</sup> Նույն աղբյուրից, 10, և նույն աղբյուրից, 12,

Աղյուսակ 4.17.6-ը ցույց է տալիս հարցման մասնակիցների այն համամասնությունը, որոնք գյուղատնտեսական մթերքի առևտրով են զբաղվել 2009-2010թթ.: Ուսումնասիրության տարածքում բոլոր բնակավայրերի հեռավոր լինելու հանգամանքը տեղաբնակներին առևտրի համար դժվար կացության մեջ է դնում, քանի որ նրանք փոխադրամիջոցների բարձր ծախսերի պատճառով առքի գները իջեցնում են, որի արդյունքում տարածքի արտադրողները ցածր եկամուտ են ստանում:

Ապրանքափոխանակությունը ոչ պաշտոնական ձևով իրականացվում է միննույն գյուղի բնակիչների միջև, ինչպես նաև գյուղերի միջև՝ ապահովելու մթերքի ավելի մեծ տեսականի. օրինակ, Գնդեվազի և Գորայքի բնակիչները հաճախ ծիրանը փոխանակում են պանրով:

Գորայքի բնակիչներին հասանելի են շուկայի երկու կազմակերպված կամ ֆորմալ աղբյուր. Հայաստանի ողջ տարածքում կաթ հավաքող և բաշխող մասնավոր ընկերության “Աշտարակ կաթ”-ի տեղական մասնաճյուղը, ինչպես նաև Միսիանում տեղակայված ձեռնարկությունը, որը տարածքում հավաքման մեքենա է շահագործում: Գորայքի ֆերմերները պանիրն ու մածունն արտադրում են միայն ներքին սպառման համար:

Սարավանում գյուղատնտեսական արտադրանքի ավելցուկի մեծ մասը գնվում է Վայքի, Եղեգնաձորի և երբեմն Երևանի առևտրականների կողմից: Կաթը հազվադեպ է վաճառվում, այն հետագա մշակում է անցնում՝ պանիր և մածուն ստանալու համար, որոնք ավելի բարձր գին ունեն: Միսը նույնպես առևտրի հայտնի ապրանք է: Սարավանի, Սարալանջի և Ուղեձորի բնակավայրերը կապող ավտոմայրուղու հատվածը առևտրի և փոխանակման համար կարևոր վայր է: Այդ պատճառով էլ Սարավան գյուղական համայնքի բնակիչներին հասանելի և մատչելի են այս առևտրի կետերը:

Քանի որ Գնդեվազը գյուղատնտեսության վրա հիմնված համայնք է, ծիրանը Գնդեվազի գերիշխող ապրանքատեսակն է: Գնդեվազի բնակիչները որպես իրենց համայնքի տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտ նշում են ծիրանի պահեստավորման հանգույցի, ինչպես նաև մրգային ջեմերի և հյութերի մշակման ձեռնարկության բացակայությունը: Գնդեվազի ֆերմերների մեծ մասն իր արտադրանքը վաճառում են Երևանի, Վրաստանի, Ռուսաստանի կամ Արարատյան դաշտավայրի առևտրականներին:

Բացի գյուղական համայնքների բնակիչների գյուղատնտեսական և անասնապահական գործունեությունից, կան նաև սեզոնային հովիվներ: Ընդհանուր առմամբ 58 սեզոնային հովիվ է առանձնացվել, ովքեր յուրաքանչյուր տարի ամռան ամիսներին Հայաստանի այլ

տարածաշրջաններից են գալիս՝ արածեցնելու իրենց խոշոր եղջերավոր անասուններին և արոտավայրերում խոտ աճեցնելու: Սեզոնային հովիվները բաժանվում են հետևյալ հիմնական խմբերի<sup>21</sup>.

- *Ուղեձորի ընտանիքներ.* ամռանը Հայաստանի այլ մասերից (հիմնականում Վայքից) Ուղեձոր են գալիս ընտանիքներով և զբաղեցնում լքված աղբբեջանական գյուղի շինությունները: Ամեն տարի նույն ընտանիքը սովորաբար զբաղեցնում է նույն տուն/շինությունները: Ընտանիքը մշակում է այդ շինությանը կից այգին, ինչպես նաև գյուղի մեջ կամ գյուղից անմիջապես դուրս գտնվող մեկ կամ ավել հողակտորներ: Տղամարդիկ անասունը տանում են արածեցնելու Սարավանի տնօրինության տակ գտնվող արոտավայրում, ինչպես նաև հավաքում խոտ: Տարբեր տնային տնտեսություններից տղամարդիկ 5-6 հոգանոց խմբեր են կազմում և հերթափոխային համակարգով վերահսկում նախիրը, որպեսզի յուրաքանչյուր խմբից ընդամենը մեկ տղամարդ կարիք ունենա ամեն օր բարձրանալ արոտավայրեր: Այն ընտանիքները, որտեղ տղամարդ չկա, կարող են հարևանին կամ ընկերոջը 4 000 ՀՀ դրամ (9.70 դոլար) վճարել յուրաքանչյուր անասունի համար ողջ սեզոնի ընթացքում:
- *Անհատական հովիվների ընտանիքներ.* ամռանը Հայաստանի այլ մասերից ընտանիքները գալիս են Գորայքի ու Սարավանի համայնքային հողեր: Յուրաքանչյուր ընտանիք ապրում է քարավանում/օբայում, մեքենայում կամ ավտոբուսում և/կամ զբաղեցնում է տարածքում ավերված շինություններ և/կամ վրաններ է տեղադրում կամ էլ այս բոլորի համակցությունն է օգտագործում՝ հոգալու իր ընտանիքի կենցաղային կարիքները և անասուններ պահելու համար անհրաժեշտ պահանջները: Կանայք և երեխաները հազվադեպ են մնում ողջ ամռան ընթացքում և այցելում են ընտանիքի անդամներին շաբաթը մեկ կամ երկու անգամ: Մի շաբթ հովիվներ միասին մնում են նույն կացարանում:
- *Տղամարդկանց խմբեր.* բարեկամական կապ ունեցող տղամարդիկ իրենց ընդհանուր անասուններին բերում են Գորայքի և Գնդեվազի հողեր և ապրում են նույն ձևով, ինչպես վերը նկարագրված անհատական հովիվները:
- *Վարձու հովիվներ.* հինգ-վեց վարձու հովիվներ այլ մարդկանց անասուններին բերում են Գորայքի և Գնդեվազի հողերը: Նրանք նույն ձևով են ապրում սեզոնի

<sup>21</sup> Բաժին 4.11-ում նկարագրվածի համաձայն WAI-ի կողմից 2012թ. իրականացված դաշտային ուսումնասիրությունների հիման վրա մշակվել է տիպաբանություն


Ժամանակ, ինչպես վերը նկարագրված անհատական հովիվները: Որոշ վարձու հովիվներ պահում են նաև իրենց անասուններին:

Քանի որ կան բավականաչափ հողատարածքներ, տարածաշրջանի գյուղատնտեսական կենսակերպի համար սահմանափակում կամ արգելք չկա. այնուհանդերձ որոշ մտահոգություններ հնչել են Գորայքում, կապված սեզոնային հովիվների հետ, ովքեր օգտագործում են այս տարածաշրջանի հողերը:

**4.17.9 Զբոսաշրջության սեկտոր**


Ջերմուկը հիմնադրվել է որպես զբոսաշրջության կենտրոն: անքային ջրերը, որոնցով հարուստ էր տեղանքը, հայտնի էին դեռևս շատ վաղուց, ներկայիս քաղաքի հիմնումից՝ 1940թ. շատ առաջ, երբ այն ճանաչվեց որպես Սովետական Միության ներսում ներգնա զբոսաշրջության կենտոն: Իր չափերով և նշանակությամբ քաղաքը իր բարձրունքին հասավ 1980-թթ.: Այդ ժամանակ նրա բնակչությունը կազմում էր 10,000 մարդ: Այն զգալիորեն նվազեց Սովետական Միության փլուզումից հետո, այնպես որ 2001թ. մարդահամարի տվյալների համաձայն արդեն կազմում էր 6,300 մարդ:

Որպես առողջարանային տուրիստական քաղաք՝ Ջերմուկն ունի թե՛ հյուրանոցներ, թե՛ վարձով տրվող բնակարաններ: Հյուրանոցները համարվում են բարձրակարգ, իսկ վարձով տրվող բնակարաններն ավելի մատչելի տարբերակ են: Զբոսաշրջությունը Ջերմուկում խիստ սեզոնային է, ամռան ամիսներին՝ հուլիսից-սեպտեմբեր, հյուրանոցները ամբողջովին զբաղված են, ինչպես նաև մեկ շաբաթվա կտրվածքով՝ Նոր տարվա ժամանակ, ինչպես երևում է Աղյուսակ 4.17.9-ում:



**Աղյուսակ 4.17.9 Մենյակների առկայությունը Ջերմուկում օրացուցային տարվա կտրվածքով**

Գործող հյուրանոցները սփռված են ամբողջ քաղաքով և ներկայացված են յոթ մեծ (50 սենյակից ավելի) և յոթ ավելի փոքր հյուրանոցներով (Տես )։ Սենյակների ընդհանուր թիվը 771 է, որոնք ունեն մոտավորապես 1950 մահճակալ։



**Աղյուսակ 4.17.10 Ջերմուկի հյուրանոցային համալիրների դիրքերը**

Աղյուսակ 4.17.7 ամփոփում է Ջերմուկում և Վայքում գոյություն ունեցող հյուրանոցները։ Եվս երեք հյուրանոց դեռ շինարարության փուլում են գտնվում Ջերմուկում, և ակնկալվում է այն ավարտին հասցնել 2017թ.

Աղյուսակ 4.17.7 Ջերմուկի և Վայքի հյուրանոցները		
Հյուրանոցի անվանումը	# Սենյակներ	# Մահճակալներ
<b>Ջերմուկ</b>		
Անի հյուրանոց	17	47
Ջերմուկ աշխարհի հյուրանոց	125	250
Վերոնա	16	32
Անուշ	18	60
Լայֆ	4	11
Արարատ	100	179
Նաիրի	21	80

<b>Աղյուսակ 4.17.7 Ջերմուկի և Վայքի հյուրանոցները</b>		
<b>Հյուրանոցի անվանումը</b>	<b># Մենյակներ</b>	<b># Մահճակալներ</b>
Արմենիա	62	260
Օլիմպիա	52	132
Ցենտրալ	13	40
Մոսկվա	75	200
Գլաձոր	170	500
Հայաթ	92	136
Նարեկ	6	24
<b>Ընդամենը՝ Ջերմուկի հյուրանոցներ</b>	<b>771</b>	<b>1951</b>
<b>Վայք</b>		
Մարիա հյուրանոց	10	27
Վայք հյուրանոց	10	~ 25
Ամրոց հյուրանոց	21	~ 40
4 փոքր հյուրանոցներ Ջերմուկի և Վայքի միջև	~ 25	~ 50
<b>Ընդամենը՝ Վայքի և շրջակա հյուրանոցներ</b>	<b>~66</b>	<b>142</b>

2008թ. Հայաստանն ընդունեց զբոսաշրջության զարգացման հայեցակարգը, որի նպատակն էր նպաստել համախառն ազգային եկամտի աճին՝ զարգացնելով երկրի զբոսաշրջությունը: Որպես այս նախաձեռնության մաս, Էկոնոմիկայի նախարարությունը՝ համաձայն կառավարության N 1064<sup>22</sup> որոշման, հանձնարարեց ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությանը (ԱՄՆ ՄԶԳ) գնահատում անցկացնել Ջերմուկում, վերջինիս ճանաչելու որպես “Զբոսաշրջության կենտրոն”, և ներկայացնելու հետևյալ արդյունքների իրականացմանն ուղղված քայլերը:

- Վերածել Ջերմուկ քաղաքը ամբողջ տարին գործող, միջազգային չափանիշներին համապատասխանող առողջարան-հանգստավայրի
  - բարելավելով առողջարանային և ձմեռային զբոսաշրջության

<sup>22</sup> 2008թ. սեպտեմբերին ընդունված որոշումը՝ համաձայն Զբոսաշրջության մասին ՀՀ օրենքի հոդված 2 և հոդված 6-ի կետ 4-ի, և ՀՀ կառավարության՝ զբոսաշրջության ոլորտում տարվող գործունեության, քաղաքը ճանաչեց որպես “Զբոսաշրջության կենտրոն”

- հարմարություններն ու ծառայությունները՝ որպես եվրոպական զբոսաշրջության ուղղությունների այլընտրանք
- դարձնելով այն շախմատի առաջնությունների միջազգային կենտրոն
  - դարձնելով այն համահայկական և միջազգային երիտասարդական ճամբարատեղ
  - դարձնելով այն մշակութային և զբոսաշրջության կենտրոն
- Ապահովել տարեկան 100,000 զբոսաշրջիկների այցելություններ
  - Բարձրացնել զբոսաշրջության միջոցով առաջացած եկամուտները՝ հասցնելով մինչև 100 միլիոն ԱՄՆ դոլարի
  - Ստեղծել 4,000 լրացուցիչ աշխատատեղեր:

Համաձայն 2006 և 2007 թվականներին այցելուների շրջանում անցկացված հարցմանը՝ ԱՄՆ ՄԶԳ ուսումնասիրողները գնահատեցին այցելուներից ակնկալվող տարեկան ընդհանուր եկամուտը \$15 մլն. ԱՄՆ դոլար: Ակնկալվում է նաև, որ Ջերմուկում զբոսաշրջության շնորհիվ կավելալան 450 սեզոնային աշխատատեղեր: Այս ուսումնասիրությունը կատարվել էր մինչև հայկական «Սոցիալական փաթեթների» ծրագրի իրականացումը<sup>23</sup>, ինչը մատչելի հանգիստ է ապահովում հայ քաղաքացիական ծառայողների համար Հայաստանի մի շարք վայրերում, ինչպես նաև՝ Ջերմուկում: 2015թ. նոյեմբերին իրականացված տուրիստական դաշտային աշխատանքների ժամանակ, հյուրանոցների մեծ մասը զեկուցեց, որ մասնակցում է Սոցիալական փաթեթի ծրագրին, ինչն ավելացրել է նրանց զբաղվածության ցուցանիշը:

2008 թ. ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից կատարված վերլուծությունը ցույց տվեց, որ զբոսաշրջության առջև դրված վերոնշյալ նպատակներին հնարավոր է հասնել, սակայն մի քանի տարի կպահանջվի: : ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից իրականացված վերլուծության ժամանակ, օգտագործվելով առկա տվյալները, հաշվարկվեց, որ զբոսաշրջիկների թվի աճը չորս տարվա ընթացքում կկազմի 200%: \$100 ԱՄՆ դոլլար եկամուտով ոլորտի առջև դրված նպատակը համարվում է մոտ 50% գերազանցված: Չնայած նրան, որ վերլուծության

---

<sup>23</sup> Հանրային ոլորտի աշխատակիցների համար Սոցիալական փաթեթը մշակվել է 2012թ Հայաստանի կառավարության կողմից, ինչը միտված էր ավելի հրապուրիչ դարձնելու աշխատանքը պետական մարմիններում ու կազմակերպություններում: Սոցիալական փաթեթը տրամադրում է առողջապահական, հիփոթեկային վճարումների աջակցման, երեխաների վարձավճարների և հանգստի ծառայություններ աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների համար:

արդյունքում այս նպատակները հասանելի էին թվում, չորս տարվա կտրվածքով դրանք համարվեցին անիրականանալի:

Այս նպատակների առումով ձեռքբերումների առաջընթացի մակարդակը պատկերացնելու համար 2013թ. Լիդիանն իրականացրել է հիմնական տեղեկատու հարցազրույցներ: Առաջնային հետազոտությունը ներառում էր 11 հյուրանոցների ներկայացուցիչների հետ հարցազրույց, հինգ ներկայացուցիչ Ջերմուկի առողջապահական ծառայությունների ոլորտից, Երևանում գործող վեց զբոսաշրջային օպերատոր և երկու ներկայացուցիչ Եվրոպական ակադեմիայի զբոսաշրջության երևանայան վարչությունից: Ջերմուկի բնակիչների փոքր խմբերի հետ կազմակերպվել է նաև 2 ֆոկլուս խմբի հանդիպում: Չնայած այդ հետազոտության մեջ չկա անդրադարձ 2008թ. հաշվետվության մեջ սահմանված նպատակներին, այնուամենայնիվ այն փորձել է անդրադառնալ այն ոլորտներին, որտեղ նկատվել է որոշակի առաջընթաց, ինչպես նաև ռազմավարության այն կետերին, որտեղ, չնայած սպասվածին, ընդհանրապես առաջընթաց չի գրանցվել: Այս մանրամասն գնահատումն իրականացվել է 2013թ. և, տեղի ունեցած առաջընթացը միջանկյալ ժամանակահատվածում տվեց իր արդյունքները:

<b>Աղյուսակ 4.17.8. 2008թ. Ջարգացման համապարփակ պլանի նկարագիրը</b>	
<b>2008թ-ի նպատակները</b>	<b>Վիճակը՝ համաձայն 2013թ. Լիդիանի գնահատման <sup>24</sup></b>
Նպատակ 1: Թարմացնել և բարելավել առողջարանի, հյուրանոցի, հյուրատան ծառայությունների որակը և կողմնորոշել նրանց դեպի օտարերկրյա և ներքին սպառողները (համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին)	
<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Բոլոր առողջարանները վերանորոգել առաջընթացի վերահսկման ուղենիշների համաձայն</li> <li><input type="checkbox"/> Մշակել շենքերի պահպանման կողեր</li> <li><input type="checkbox"/> Ընդունել օրենքներ, որոնք ապահովում էին մատչելիություն հաշմանդամների համար. Բոլոր 30-ից ավել սենյակներ ունեցող հյուրանոցների ու</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Վերահսկման ուղեցույցները ոչ բոլորի կողմից են հասկացվում. հյուրանոցների մեծ մասը, որտեղ կատարվել են այցելություններ, վերանորոգված են կամ վերանորոգման ընթացքի մեջ են՝ տարածքը ընդլայնելու կամ ինտերիերի դիզայնի համար (համաձայն Հայաստանի շինարարական նորմերի)</li> </ul>

<sup>24</sup> Առաջընթացի և դեռևս գոյություն ունեցող մարտահրավերների և սահմանափակումների մասին տեղեկատվությունը հավաքվել է Լիդիանի կողմից՝ 2013թ. փետրվարին կատարված առաջնային հետազոտության արդյունքում: Այս գնահատման արդյունքները չեն հաստատել Ջերմուկի շահագրգիռ կողմերը, սակայն գնահատման նպատակով նրանց հետ անց են կացվել հարցազրույցներ:





<b>Աղյուսակ 4.17.8. 2008թ. Չարգացման համապարփակ պլանի նկարագիրը</b>	
<b>2008թ-ի նպատակները</b>	<b>Վիճակը՝ համաձայն 2013թ. Լիդիանի գնահատման <sup>24</sup></b>
<p>առողջարանների համար ապահովել ինտերնետ</p> <ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Ապահովել, որպեսզի հյուրանոցներից գոնե չորսը ունենան բիզնես կենտրոն. Խոշոր առողջարանները արբանյակային հեռուստատեսության միջոցով ունենան հինգ հեռուստաալիք (անգլերեն և ռուսերեն)</li> <li><input type="checkbox"/> Ապահովել, որպեսզի ռեստորաններից և առողջարաններից երեքը առաջարկեն բուսական, հինգը՝ տարբեր ազգերի սնունդ, 50%-ն ունենա տպագիր մենյու</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Հյուրանոցների և առողջարանների մեծ մասը մատչելի չեն անվասայլակներ օգտագործողների համար</li> <li><input type="checkbox"/> Առաջընթաց է նկատվում ինտերնետային ծառայություններում. բոլոր հյուրանոցներն ու առողջարանները, որտեղ եղել են, ունեն Wi-Fi</li> <li><input type="checkbox"/> Ջերմուկում կա միայն մեկ կամ երկու ռեստորան (որոնցից երկուսը բաց են ձմռանը), որոնք ունեն տպագիր մենյու և առաջարկում են հայկական ավանդական ուտելիքներ</li> <li><input type="checkbox"/> Հյուրանոցների և առողջարանների մեծ մասը առաջարկում են սնունդ բուֆետներում: Ցանկության դեպքում բուսական սնունդ կարելի է պատվիրել</li> </ul>
<p><b>Նպատակ 2. Բարելավել և թարմացնել առողջարանների մի շարք բժշկական հարմարությունները և տրամադրվող ծառայությունները՝ դրանք կողմնորոշելով դեպի օտարերկրյա և ներքին սպառողները</b></p>	
<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Ուսումնասիրել հանքային ջրերի օգտակար ազդեցությունը մարդու առողջության վրա և արդյունքները ամփոփել մինչև 2009թ. Դրսի մասնագետների կողմից ուսումնասիրությունը ավարտել մինչև 2012թ.</li> <li><input type="checkbox"/> Բարելավել առողջության ամրապնդմանն ուղղված ծառայությունները առողջարանների 50%-ում</li> <li><input type="checkbox"/> Ապահովել, որպեսզի երեք առողջարաններ ներմուծեն բուժման նոր փաթեթներ հատուկ նպատակային շուկաների համար</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> 2008թ. ի վեր որևէ հետազոտություն (ներքին և արտաքին) չի կատարվել</li> <li><input type="checkbox"/> Բուժման սահմանափակ դիվերսիֆիկացիա</li> <li><input type="checkbox"/> Հանքային ջրերով և այլ ավանդական եղանակներով բուժում (ցելսաբուժություն, ստամոքսի, աղիների լվացում, տորֆաբուժություն և այլն) կատարվում է միայն մեծ հյուրանոցներում կամ սանատորիաներում, մինչդեռ փոքր հյուրանոցները ծառայում են միայն գիշերակացի համար</li> <li><input type="checkbox"/> 2015թ կեսերին առողջարանային նոր հյուրանոց (Հյաթ) հիմնադրվեց և սկսեց աշխատել</li> </ul>
<p><b>Նպատակ 3: Ջերմուկում բացել դահուկասպորտի և այլ ձմեռային սպորտաձևերի հաստատություններ</b></p>	
<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Բացել գոնե մեկ դահուկասպորտի դպրոց մինչև 2010թ. և երկուսը՝ մինչև 2012թ.</li> <li><input type="checkbox"/> Բացել և աշխատեցնել ավտոբուսային կամ տրանսպորտային այլ ծառայություններ մինչև 2009թ.</li> <li><input type="checkbox"/> Դահուկային սահուղիների կառուցման</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Չկա դահուկային դպրոց</li> <li><input type="checkbox"/> Հյուրանոցից դեպի դահուկորդների վերհան վերելակ որևէ տրանսպորտային ծառայություն չի գործում</li> <li><input type="checkbox"/> Իշխանությունները տեղյակ չէին տեխնիկատնտեսական հիմնավորման</li> </ul>

<b>Աղյուսակ 4.17.8. 2008թ. Չարգացման համապարփակ պլանի նկարագիրը</b>	
<b>2008թ-ի նպատակները</b>	<b>Վիճակը՝ համաձայն 2013թ. Լիդիանի գնահատման <sup>24</sup></b>
<p>ծրագիրն իրականացնել մինչև 2010թ.</p> <ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Տեխնիկատնտեսական հիմնավորումն ավարտել նախքան որևէ նոր ձեռնարկում սկսելը</li> <li><input type="checkbox"/> Տարին գոնե երկու միջոցառում կազմակերպել</li> </ul>	<p>ուսումնասիրությունների անցկացման մասին</p> <ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Չկա որևէ համակարգ, որ արտահայտի դահուկորդների վերհան վերելակի զբաղված լինելը</li> <li><input type="checkbox"/> Հատուկ միջոցառումներ (“Հրաժեշտ ձմռանը”) են կազմակերպվում ժամանակ առ ժամանակ (մի քանի տարի առաջ դրանք արվում էին ամեն տարի)</li> </ul>
<p><b>Նպատակ 4. Բարձրացնել Ջերմուկի, որպես շախմատի միջազգային կենտրոնի հեղինակությունը, ապահովելով համապատասխան հարմարություններ, գովազդներ, այլ</b></p>	
<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Կառուցել մրցատարածություններ, որոնք մեկ մրցույթի ժամանակ կծառայեն մինչև 1,000 մարզիկների համար</li> <li><input type="checkbox"/> Տարին մեկ անգամ Ջերմուկում անցկացնել մեկ խոշոր միջազգային մրցաշար</li> <li><input type="checkbox"/> Ապահովել այլ միջազգային մրցանակային ֆոնդերի համարժեք ֆոնդեր</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Ջերմուկում անց են կացվում տարեկան մեկ կամ երկու միջազգային մրցաշարեր. Շախմատի միջազգային մրցումներին մասնակցում են 10-15 շախմատիստներ</li> <li><input type="checkbox"/> Շախմատի մրցաշարերի համար նոր շենք չի կառուցվել</li> <li><input type="checkbox"/> Մրցանակային ֆոնդը սահմանափակ է և դժվարացնում է մեծ թվով օտարերկրյա շախմատիստների գրավումը</li> </ul>
<p><b>Նպատակ 5: Չարգացնել Ջերմուկի հնարավորություններն ու բարձրացնել նրա հեղինակությունը, այն դարձնելով բարձրորակ ճամբարատեղի համահայկական և միջազգային երիտասարդական հավաքների ժամանակ</b></p>	
<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Անցկացնել հանրային քննարկումներ և հարցումներ՝ բացահայտելու համայնքի կարիքներն ու ցանկությունները</li> <li><input type="checkbox"/> Համայնքի ցանկության հիման վրակառուցել սպորտային նոր հրապարակներ</li> <li><input type="checkbox"/> Կառուցել նպատակային սպորտային հրապարակներ մինչև 2012թ. Ամեն սպորտաձևից ունենալ միջազգային չափանիշներին համապատասխան վերապատրաստված երկու մարզիչ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Ջերմուկում չկան տեղի բնակիչների կամ զբոսաշրջիկների համար սպորտային հրապարակներ, փակ ակումբներ կամ ժամանցային վայրեր</li> <li><input type="checkbox"/> Կա ըմբշամարտի և շախմատի երկու դպրոց</li> <li><input type="checkbox"/> Մեծ հյուրանոցները կահավորվում և վերանորոգվում են, նրանց սարքավորումները թարմացվում են</li> <li><input type="checkbox"/> Հանրային քննարկումներ չեն անցկացվել կարիքները բացահայտելու և մարդկանց կարծիքները հավաքելու համար</li> </ul>
<p><b>Նպատակ 6: Բարելավել զբոսաշրջության տարբեր ճյուղերի որակն ու ապահովել դրանց բազմազանությունը՝ ժամանացային վայրերի, ռեստորանների, խանութների տեսքով և ժամանացային միջոցառումների կազմակերպման միջոցով, որոնք զբոսաշրջիկներին տարբեր հնարավորություններ կնձեռեն իրենց հանգիստը կազմակերպելու համար, կավելացնեն մեկ զբոսաշրջիկի համար հաշվարկված օրական ծախսերը և նրանց մնալու տևողությունը</b></p>	
<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Վերանորոգել ժամանացային վայրերից</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Վերջին շրջանում ոչ մի ժամանացային</li> </ul>

<b>Աղյուսակ 4.17.8. 2008թ. Զարգացման համապարփակ պլանի նկարագիրը</b>	
<b>2008թ-ի նպատակները</b>	<b>Վիճակը՝ համաձայն 2013թ. Լիդիանի գնահատման <sup>24</sup></b>
<p>գոնե երեքը՝ փակցնելով համապատասխան ցուցանակներ և տեղեկատվական տախտակներ</p> <ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Մինչև 2012 թ. ստեղծել երեկոյան ժամանցի գոնե երկու հաստատություն</li> <li><input type="checkbox"/> Մինչև 2012թ. կառուցել նվազագույնը երկու նոր սահուղի համապատասխան ցուցանակներով</li> <li><input type="checkbox"/> Կառուցել մեկ հեծանվային երթուղի և մեկ վազքուղի ձիերի համար</li> <li><input type="checkbox"/> Գտնել մի ներդրող, ով կբացի հեծանիվների վարձակալության կենտրոն կամ ձիարշավարան</li> <li><input type="checkbox"/> մինչև 2012թ. բացել երեք մանրածախ խանութ զբոսաշրջիկների համար</li> <li><input type="checkbox"/> Մինչև 2010թ. բացել գոնե մեկ ինտերնետ-սրճարան գետի աջ ափին</li> </ul>	<p>վայր չի վերանորոգվել, ոչ մի ցուցանակ կամ տեղեկատվական տախտակ չի փակցվել, սակայն տեղանքը բավարար վիճակում է պահպանմանն ուղղված տարեկան աշխատանքների շնորհիվ</p> <ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Լավ հնարավորություն կա քայքային երթուղիների մարքեթինգի համար, սակայն այդ հնարավորությունը հաճախակի չի օգտագործվում</li> <li><input type="checkbox"/> Հեծանիվների վարձակալությունը զարգանում է, սակայն դեռևս 6ն են,</li> <li><input type="checkbox"/> Չկան առևտրի կետեր կամ ինտերնետ սրճարաններ զբոսաշրջիկների համար</li> <li><input type="checkbox"/> Տարադրամի փոխանակման կետեր կան միայն բանկերում. քաղաքում կա երկու բանկումատ</li> </ul>
<p>Նպատակ 7. Բարելավել տուրիզմի կառավարման և աշխատակազմի կարողությունների զարգացման հնարավորությունները. Կազմակերպել տուրիզմի վերապատրաստման ծրագրեր տեղի աշխատակազմի համար, պրակտիկայի, ուսանելու և արհեստագործական դասընթացներ</p>	
<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Մինչև 2012 թ. 450 հոգուց բաղկացած ամբողջ աշխատակազմի համար կազմակերպել հիմնական վերապատրաստման դասընթացներ</li> <li><input type="checkbox"/> Լեզվի հիմնական ուսուցում կազմակերպել այն աշխատողների համար, ովքեր ուղղակիորեն շփվում են հաճախորդների հետ</li> <li><input type="checkbox"/> Մինչև 2012թ. հիմնել տուրիստական գրասենյակ</li> <li><input type="checkbox"/> Մինչև 2012թ. տուրիստական կազմակերպությունների բոլոր ղեկավարների և ղեկավար աշխատակազմի համար կազմակերպել որևէ տեսակի կառավարման դասընթացներ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Վերջին երկու կամ երեք տարիների ընթացքում Երևանի հյուրանոցների միությունը մոտավորապես 15 աշխատողի համար կազմակերպել է վերապատրաստումներ և տեխնիկական դասընթացներ (օր.հաշվապահություն, շուկայագիտություն), սակայն ոչ լեզվի դասընթացներ</li> <li><input type="checkbox"/> Այս պահի դրությամբ Ջերմուկում չկա տուրիստական գրասենյակ</li> <li><input type="checkbox"/> Երևանում Եվրոպական ակադեմիան 10 տարի է արդեն, ինչ ունի տուրիզմի բաժին, սակայն կրթական հաստատությունների և Ջերմուկի միջև համագործակցություն չկա</li> </ul>
<p>Նպատակ 8: Ջերմուկի համար մի յուրօրինակ “ապրանքանիշ” ստեղծել, որը կարտացոլի նրա առկա և հնարավոր մրցակցային առավելությունները</p>	
<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Ծանոթանալ քաղաքապետարանի կողմից պատրաստված սպառողների մասին տեղեկատվությանը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Քաղաքապետարանի աշխատակիցները տեղյակ չէին որևէ ապրանքանշանային կամ գովազդային ռազմավարության</li> </ul>

<b>Աղյուսակ 4.17.8. 2008թ. Չարգացման համապարփակ պլանի նկարագիրը</b>	
<b>2008թ-ի նպատակները</b>	<b>Վիճակը՝ համաձայն 2013թ. Լիդիանի գնահատման <sup>24</sup></b>
<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Մինչև 2011թ. մշակել ռազմավարություն, որը կարտացոլի Ջերմուկի ապրանքանիշն ու կնպաստի նրա գովազդին</li> <li><input type="checkbox"/> Մինչև 2009թ. մշակել և տպագրել գովազդային նյութեր և տարածել դրանք Ջերմուկի տուրիստական կազմակերպություններում, բաժանել տուր-օպերատորներին, էքսկուրսավարներին:</li> <li><input type="checkbox"/> Բարելավել վեբ կայքի դիզայնը, տեղեկատվությունը ներկայացնելով նվազագույնը 5 լեզուներով, ինչպես նաև այն հղումի տեսքով ներառել այլ կայքերում</li> </ul>	<p>մասին</p> <ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Գովազդային նյութերը (քարտեզներ, բրոշյուրներ) կարելի է գտնել քաղաքապետարանում, որոնք ցանկության դեպքում տրվում են դրանցով հետաքրքրված զբոսաշրջիկներին</li> <li><input type="checkbox"/> Ջերմուկի վեբ պորտալները երեք լեզուներով հիմնական տեղեկատվություն են տրամադրում բուժման ընթացակարգերի, պատմության մասին</li> </ul>
<p>Նպատակ 9. Թարմացնել զբոսաշրջիկներին տրամադրվող ծառայությունների մասին տեղեկատվությունը՝ շահագրգռելով նրանց այցելել և ավելի հեշտ կողմնորոշվել Ջերմուկում, ինչպես նաև ավելի լավ տեղեկացված լինել Ջերմուկում կազմակերպվող հանգստի մասին</p>	
<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Ապահովել, որպեսզի բոլոր 30-ից ավել սենյակ ունեցող հյուրանոցներն ու առողջարանները տրամադրեն առցանց ամրագրման ծառայություններ</li> <li><input type="checkbox"/> Մինչև 2010թ. ստեղծել կայք դահուկորդների վերհան վերելակի և նրա աշխատանքի մասին</li> <li><input type="checkbox"/> Մինչև 2010թ. ստեղծել և գործարկել Այցելուների Տեղեկատվական Կենտրոն</li> <li><input type="checkbox"/> Քաղաքի տարբեր հատվածներում զբոսաշրջիկների համար տեղադրել տասը տեղեկատվական վահանակներ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Booking.com լայնորեն օգտագործվում է հյուրանոցների կողմից առցանց ամրագրումների համար</li> <li><input type="checkbox"/> Դահուկորդների վերհան վերելակի կայքում տեղադրված են միայն մի քանի նկարներ</li> <li><input type="checkbox"/> Չկա այցելուների տեղեկատվական կենտրոն. ցանկացողները կարող են տեղեկատվություն ձեռք բերել քաղաքապետարանից</li> <li><input type="checkbox"/> Չկան տեղեկատվական վահանակներ զբոսաշրջիկների համար</li> </ul>
<p>Նպատակ 10. Բարձրացնել Ջերմուկի հեղինակությունը՝ որպես զբոսաշրջության կենտրոնի, առանձակի ուշադրություն հրավիրելով նրա ճարտարապետության, կանաչ տարածքների, շրջակա միջավայրի ոչ աղտոտվածության, մաքրության և մարդկանց հյուրասիրության վրա</p>	
<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Համապատասխան նորմերը հիմք ընդունելով, մինչև 2010թ. 50%, մինչև 2012թ՝ 100%-ով իրականացնել ճիշտ կամ պատշաճ պլանավորում և քաղաքի նախագծում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Քաղաքապետարանի ներկայացուցիչները հղում կատարեցին ՀՀ շինարարական նորմերի ու կանոնների ուղեցույցին</li> </ul>
<p>Նպատակ 11. Բարելավել դեպի Ջերմուկ և Ջերմուկից դեպի այլ վայրեր մատակարարող տրանսպորտային ենթակառուցվածքը և ընդլայնել տրանսպորտային ծառայությունները</p>	

<b>Աղյուսակ 4.17.8. 2008թ. Չարգացման համապարփակ պլանի նկարագիրը</b>	
<b>2008թ-ի նպատակները</b>	<b>Վիճակը՝ համաձայն 2013թ. Լիդիանի գնահատման <sup>24</sup></b>
<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Վերանորոգել ճանապարհը մինչև 2010թ.</li> <li><input type="checkbox"/> Որոշում կայացնել օդանավակայանի կամ ուղղաթիռների վայրէջքի համար նախատեսված հրապարակի կառուցման համար</li> <li><input type="checkbox"/> Մինչև 2010թ. ավարտին հասցնել <i>ԱՃի ռազմավարությունը</i></li> <li><input type="checkbox"/> Երևանից Ջերմուկ տանող ճանապարհի տարբեր խաչմերուկներում ցուցանակներ դնել</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Ճանապարհները կամ դրանց տարբեր հատվածներ պարբերաբար վերանորոգվում են. ցուցանակները վատ որակի են և քիչ</li> <li><input type="checkbox"/> Քաղաքապետարանի ներկայացուցիչները տեղյակ չէին <i>ԱՃի ռազմավարության</i> մասին</li> </ul>
<b>Նպատակ 12. Բարելավել Ջերմուկի հաղորդակցության համակարգերը</b>	
<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Մինչև 2010թ. Ջերմուկը ապահովել WiMax-ով</li> <li><input type="checkbox"/> Մինչև 2010թ. 100% ապահովել բջջային ցանցի առկայությունը</li> <li><input type="checkbox"/> Ապահովել, որպեսզի մինչև 2010թ. գիշերակացի հաստատությունների և ռեստորանների 75% -ը ընդունեն վարկային քարտեր</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Այցելած բոլոր հյուրանոցներն ու առողջարանների համարները (բոլոր չափերի) ապահովված են Wi-Fi-ով</li> <li><input type="checkbox"/> Ջերմուկը 100%-ով ապահովված է բջջային կապով</li> <li><input type="checkbox"/> Վարկային քարտերով վճարումներ կատարելը այնքան էլ տարածված չէ, սակայն հյուրանոցները կարող են աշխատել փոխանցումների միջոցով</li> </ul>
<b>Նպատակ 13. Ընդլայնել և բարելավել բուժօգնությունները և առողջապահական հաստատությունները (տես Համայնքի առողջություն, բաժին 4.15-ը)</b>	
<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Բարելավել պոլիկլինիկաների աշխատանքը՝ վերջիններիս մինչև 2012թ. համալրելով շտապօգնության ծառայություններով, ռենտգենի համար անհրաժեշտ սարքավորումներով և նյութերով, վիրաբուժարանով</li> <li><input type="checkbox"/> Մինչև 2010թ. կառուցել մեկ ամբողջովին հագեցված ատամնաբուժական կլինիկա</li> <li><input type="checkbox"/> Մինչև 2010թ. վերապատրաստել և ունենալ շտապօգնության աշխատակիցներ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Ջերմուկի հիվանդանոցը վերջին մի քանի տարիների ընթացքում չի բարեփոխվել</li> <li><input type="checkbox"/> Ներկայումս ռենտգեն սենյակը ծառայում է որպես պահեստ. վիրահատարանը չի աշխատում բժիշկների անբավարար քանակի պատճառով</li> <li><input type="checkbox"/> Ջերմուկում գործում են երկու մասնավոր փոքր ատամնաբուժարաններ (յուրաքանչյուրն ունի երկու աթոռ);</li> <li><input type="checkbox"/> Չկա օպտիկայի/աչքերի մասնագետ</li> <li><input type="checkbox"/> Չկան վերապատրաստված շտապօգնության բժիշկներ. փոխարենը վերապատրաստվել են երկու բուժքույր, ովքեր տրամադրում են շտապօգնության ծառայություններ</li> </ul>
<b>Նպատակ 14. Հաշվարկել հնարավոր լրացուցիչ աշխատատեղերը և աշխատողներին ապահովել համապատասխան բնակարաններով</b>	
<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> ԱՃի ռազմավարությունը ավարտել մինչև 2010թ.</li> <li><input type="checkbox"/> Գրանցել բոլոր սեփականատերերին՝</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Հայտնի չեն ովքեր են դատարկ տների սեփականատերերը</li> <li><input type="checkbox"/> Շատ բնակարաններ/տներ տրվում են</li> </ul>

<b>Աղյուսակ 4.17.8. 2008թ. Զարգացման համապարփակ պլանի նկարագիրը</b>	
<b>2008թ-ի նպատակները</b>	<b>Վիճակը՝ համաձայն 2013թ. Լիդիանի գնահատման <sup>24</sup></b>
<p>տրամադրելով նրանց էլեկտրոնային փոստ</p> <ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Մինչև 2010թ. գոնե 75%-ով ապահովել վարձով տրվող բնակարանների կամ այլ կացարանների առկայությունը</li> <li><input type="checkbox"/> Ապահովել, որպեսզի կացարանների գոնե 50% զբաղեցված լինի հանգստի կամ ամառվա սեզոնին</li> </ul>	<p>վարձով (բնակիչները տեղափոխվում են ավելի մատչելի տներ սեզոնի ժամանակ, դրանք հանձնելով զբոսաշրջիկներին)</p> <ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Ֆոկուս խմբի մասնակիցների պատասխանների հիման վրա հաշվառվել է, որ բնակիչների 80%-ը վարձով են տալիս իրենց բնակարանները սեզոնի ժամանակ</li> <li><input type="checkbox"/> Ոչ թեժ սեզոնի ընթացում նույնպես մարդիկ վարձով են տալիս իրենց բնակարանները (օր. շախմատային մրցաշարերի ժամանակ)</li> </ul>
<p><b>Նպատակ 15. Բարելավել առկա ենթակառուցվածքը. բարելավել ցուցանակների որակը և մոդերնիզացնել ու գեղեցկացնել քաղաքի փողոցների, մայրթերի և այգիների տեսքը</b></p>	
<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Մինչև 2012թ. հիմնվելով վերահսկման ուղեցույցների վրա, բարեկարգել 10 կմ հետիոտնի ճանապարհ</li> <li><input type="checkbox"/> Ապահովել բոլոր փողոցների լուսավորությունը</li> <li><input type="checkbox"/> Բոլոր ճանապարհների խաչմերուկներում և զբոսաշրջության աշխույժ վայրերում տեղադրել տեղեկատվական ցուցանակներ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Փողոցների կենտրոնական հատվածները անմխիթար վիճակում են</li> <li><input type="checkbox"/> Տոների ժամանակ փողոցների լույսերը վառվում են</li> <li><input type="checkbox"/> Քաղաքում չկա զբոսաշրջիկներին տեղեկատվություն տրամադրող ցուցանակ</li> <li><input type="checkbox"/> Մասնավոր սեկտորի հիմնական տեղեկատվական հարցազրույցներից բխում է, որ նրանք հանել են հյուրանոցի առջև տեղադրված ցուցանակը բարձր վճարների պատճառով</li> </ul>
<p><b>Նպատակ 16: Մշակել կոշտ թափոնների հեռացման և կեղտաջրերի մաքրման մեթոդները</b></p>	
<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Մինչև 2012թ. վերանորոգել կեղտաջրերի համակարգը</li> <li><input type="checkbox"/> Աղբավայրը համապատասխանեցնել ընդունված չափանիշներին, որպեսզի այն այլևս չաղտոտի ստորգետնյա ջրերը</li> <li><input type="checkbox"/> Ջերմուկում անցկացնել կենցաղային թափոնների և վերամշակման նյութերի հավաքման համակարգ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> 1ին փուլում ջրահեռացման նոր համակարգը ներդրվեց (մեխանիկական անջատում) KfWի ֆինանսավորումով: Պարզ չէ՝ երբ կներդրվի 2րդ փուլը</li> <li><input type="checkbox"/> Աղբահանությունը լավ չի կատարվում և տարածքը ծածկված է կենցաղային աղբով</li> </ul>
<p><b>Նպատակ 17. Հնարավորություններ ստեղծել, որպեսզի տեղական գյուղատնտեսական արտադրանքը օգտագործվի զբոսաշրջիկների գիշերակացի հաստատություններում, հյուրանոցներում, ռեստորաններում, մանրածախ առևտրի կետերում, ապահովելով բարձրորակ օրգանական և տեղական արտադրանք</b></p>	
<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Մինչև 2009թ. ուսումնասիրություն կատարել, պարզելու թե արդյոք միսը, կաթնամթերքը և բանջարեղենը</li> </ul>	<p><i>Այս նպատակի համար որևէ տեղեկատվություն չի հավաքվել</i></p>

<b>Աղյուսակ 4.17.8. 2008թ. Չարգացման համապարփակ պլանի նկարագիրը</b>	
<b>2008թ-ի նպատակները</b>	<b>Վիճակը՝ համաձայն 2013թ. Լիդիանի գնահատման <sup>24</sup></b>
<p>համապատասխանում են շուկայի պահանջներին</p> <p><input type="checkbox"/> Գյուղատնտեսները կբարձրացնեն արտադրանքի արտադրողականությունը 25%-ով</p>	
<p>Նպատակ 18. Համայնքի բնակիչների համար ապահովել համապատասխան հարմարություններ և տրամադրել համայնքային ծառայություններ՝ բարելավելու վերջիններիս կենսամակարդակը և սոցիալական պայմանները</p>	
<p><input type="checkbox"/> Մինչև 2010թ. առնվազն հինգ խաղահրապարակ կառուցել</p> <p><input type="checkbox"/> Ստեղծել առնվազն մեկ համայնքային կենտրոն</p> <p><input type="checkbox"/> Մինչև 2012թ. գործազուրկների առնվազն 50%-ը անցնելով կարճաժամկետ դասընթացները, աշխատանք կփնտրեն զբոսաշրջության ոլորտում</p> <p><input type="checkbox"/> Այդ մարդկանց գոնե 50%-ը չորս ամսվա ընթացքում աշխատանք կգտնի զբոսաշրջության ոլորտում</p>	<p><input type="checkbox"/> Կենտրոնում կա մի փոքր խաղահրապարակ</p> <p><input type="checkbox"/> Ջերմուկում չկա համայնքային կենտրոն</p> <p><input type="checkbox"/> Քաղաքապետարանի ներկայացուցիչն ասաց, որ տուրիզմի ոլորտում աշխատանք փնտրողների համար դասընթացներ կամ որևէ վերապատրաստում չկա կազմակերպված</p> <p><input type="checkbox"/> Հիմնական տեղեկատվական հարցազրույցների հիման վրա պարզ դարձավ, որ արտագաղթը վերջին տարիների ընթացքում մեծ չափերի է հասնում</p>
<p>Նպատակ 19. Նպաստել Վայոց Ձորի և Ջերմուկի կրոնական և մշակութային ժառանգության զարգացմանը՝ հանուն տեղի բնակչության տնտեսական և սոցիալական վիճակի բարելավման և զբոսաշրջության աճի</p>	
<p><input type="checkbox"/> Մինչև 2012թ. զբոսաշրջիկների համար տարբեր իրերի վաճառքի համար տարածք հասկացնել</p> <p><input type="checkbox"/> Թեժ և հանգիստ սեզոնների ժամանակ տարին մեկ անգամ գոնե մեկ կամ երկու ցուցահանդես բացել կամ որևէ միջոցառում կազմակերպել</p> <p><input type="checkbox"/> Վերանորոգել հանքային ջրերի սրահի մեջ գտնվող “Թագավորների լոգարանները” և Գնդեվանքը</p> <p><input type="checkbox"/> Չորս մշակութային հուշարձանների մոտ տեղեկատվական ցուցանակներ դնել</p> <p><input type="checkbox"/> Կազմակերպել տարին նվազագույնը չորս միջոցառում</p>	<p><input type="checkbox"/> Ջերմուկի կենտրոնի տարբեր հատվածներում ձեռքի աշխատանքի գործեր և դեղաբույսեր են վաճառվում, սակայն այն շատ վատ է կազմակերպված. չկան զուգարաններ և փակ տաղավարներ</p> <p><input type="checkbox"/> Պատկերասրահը հազվադեպ է փոխում իր ցուցադրությունները</p> <p><input type="checkbox"/> Ժամանակին ամեն տարի ձմռանը ինչ-որ միջոցառում էր կազմակերպվում, իսկ հիմա՝ մի քանի տարին մեկ անգամ</p>
<p>Նպատակ 20. Պահպանել և նպաստել գյուղական միջավայրի զարգացմանը Ջերմուկում և նրա շրջակայքում</p>	
<p><input type="checkbox"/> Սաքրել կիրճը և վերացնել շուրջը</p>	<p><input type="checkbox"/> Քաղաքապետարանի</p>

<b>Աղյուսակ 4.17.8. 2008թ. Չարգացման համապարփակ պլանի նկարագիրը</b>	
<b>2008թ-ի նպատակները</b>	<b>Վիճակը՝ համաձայն 2013թ. Լիդիանի գնահատման <sup>24</sup></b>
<p>գտնվող արդյունաբերական շինությունները</p> <ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Բացել երթուղիներ՝ համապատասխան ցուցանակներով</li> <li><input type="checkbox"/> Մինչև 2012թ. նախատեսել Ազգային պարկի ստեղծումը</li> <li><input type="checkbox"/> Շահագրգիռ կողմերը համաձայնության են եկել գոտիների բաժանման հարցում</li> </ul>	<p>ներկայացուցիչները հաստատեցին, որ կիրճը և նրա հարակից տարածքները պարբերաբար մաքրվում են</p> <ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Չկան համապատասխան ցուցանակներով երթուղիներ</li> <li><input type="checkbox"/> Նախատեսված չէ Ջերմուկը դարձնել Ազգային պարկ</li> </ul>
<p>Նպատակ 21. Շահագրգռել տեղական իշխանություններին զարգացնելու Ջերմուկ քաղաքը, ներգրավել համայնքներին, խթանելով նրանց մասնակցությունն ու հաշվի առնելով նրանց կարծիքը տարբեր խնդիրների շուրջ, ապահովել Ջերմուկ քաղաքի կայուն զարգացումը</p>	
<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Հետագա երեք տարիների ընթացքում, տարին մեկ անգամ կազմակերպել գոնե երեք վերապատրաստման դասընթաց տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների և պաշտոնյաների համար</li> <li><input type="checkbox"/> Մինչև 2010թ. բացել և աշխատեցնել պլանավորման բաժին, մինչև 2009թ. պլանավորման բաժնում ունենալ մեկ պաշտոնյա</li> <li><input type="checkbox"/> Տարին նվազագույնը չորս միջոցառում կազմակերպել տեղի բնակիչների համար՝ նշելու մշակութային կամ որևէ ավանդական տոն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Քաղաքապետարանում չկա պլանավորման բաժին կամ զբոսաշրջության հարցերով պատասխանատու որևէ աշխատակից</li> <li><input type="checkbox"/> Ֆոկուս խմբի մասնակիցները նշել են, որ քիչ են ֆորմալ մեխանիզմները կամ հազվադեպ են կազմակերպվում միջոցառումներ, որտեղ պահանջվում է նրանց մասնակցությունը կամ իրենց կարծիքն արտահայտելու հնարավորություն է տրվում</li> </ul>
<p>Նպատակ 22. Նպաստել բիզնես միջավայրի զարգացմանը, շահագրգռելու մասնավոր սեկտորի ներկայացուցիչներին՝ ներդրումներ կատարել Ջերմուկում</p>	
<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Ամեն տարի գոնե 20 բիզնես կազմակերպություն բացել</li> <li><input type="checkbox"/> Իրականացնել խթանող ծրագրեր բիզնես կազմակերպությունների գոնե 50% -ի կողմից</li> <li><input type="checkbox"/> Շուկայի վերլուծության հիման վրա մինչև 2010թ. որոշում կայացնել տնտեսական գոտիներ հիմնելու մասին</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li><input type="checkbox"/> Ջերմուկը տնտեսական նշանակության գոտի չի հանդիսանում</li> <li><input type="checkbox"/> Որևէ տեղեկատվություն չկար նոր բիզնես կազմակերպություններ բացելու մասին. սակայն տեղի բնակիչներն ու հիմնական տեղեկատվական հարցազրույցները մատնանշեցին, որ բնակչության նվազող քանակը հանդիսանում է տնտեսության անկման ցուցանիշ</li> </ul>

Ջերմուկ այցելող զբոսաշրջիկների թվի մասին ճշգրիտ և թարմացված տեղեկություններ չկան: Ամռան ամիսներին հյուրանոցները ամբողջովին զբաղված են լինում, մինչդեռ ոչ թեժ սեզոնին՝ միայն 20%-ով: Որոշ հյուրանոցներ փակվում են ձմռանը՝ ջեռուցման



(օրինակ՝ Գլաձոր հյուրանոցը) և պահանջարկի բացակայության պատճառով (օրինակ՝ Մոսկվա հյուրանոցը). Հյուրանոցներն ու հյուրատները այդ շրջանում տարբեր վիճակում էին գտնվում: Առողջարաններից երկուսը վերանորոգվել էին 2005 և 2008թթ. ժամանակահատվածում: Նմանատիպ մի ուսումնասիրության համաձայն, որ կատարվել է Ջերմուկի քաղաքապետարանի կողմից, Ջերմուկ այցելող տարեկան զբոսաշրջիկների թիվը անկում է ապրել՝ Մովետական Միության օրոք<sup>25</sup> գրանցված առավելագույն 25,000-ից հասնելով մինչև 5,000-ի: Այս հաշվետվության մեջ ներկայացված հետագա ուսումնասիրությունը կատարվել է 2007թ. , երբ օտարերկրացի այցելուների իրական թիվը կազմել է մոտավորապես 22,500: Դրանք այն զբոսաշրջիկներն են, ովքեր այցելել են հանգստի և առողջության վերականգնման նպատակներով: Այդ թիվը ներառում է թե մեկ ժամով այցելածներին և թե նրանց, ովքեր բավական երկար ժամանակահատված են մնացել: Տարեկան կտրվածքով Ջերմուկում գիշերակացը 2008թ.<sup>9</sup> կազմել է 47,300 գիշեր: Զբոսաշրջիկների համար նախատեսված այլ հարմարությունները, ինչպես օրինակ ռեստորանները, գտնվում էին վերանորոգման տարբեր փուլերում և ձմռան ամիսներին ոչ լրիվ ռեժիմով են աշխատել: Այլ ժամանցային վայրերի թվում կարելի է նշել հանքային ջրերի աղբյուրները, շրջակայքի տեսարժան վայրերը, Գնդեվանքը, Ջերմուկում գտնվող երեք հուշարձան և լեռնադահուկային համալիրը, որը գտնվում է Ջերմուկից դուրս և սահմանափակ թվով սահուղիներ ունի:

2008թ. ի վեր փոքր առաջընթաց է գրանցվել, այնպես որ Զարգացման համապարփակ պլանում (Աղյուսակ 4.17.6) սահմանված նպատակների մեծ մասը չի իրականացվել: Հետևյալ ոլորտներում գրանցվել է որոշակի առաջընթաց. մի շարք հյուրանոցներում բարելավվել է ինտերնետ կապը, վերանորոգվել են մի քանի հյուրանոցներ և առողջարաններ, մի քանի շախմատի մրցումներ են անցկացվում տարեկան կտրվածքով, այնպես որ ոչ պաշտոնական տվյալների համաձայն, տեղի զբոսաշրջության զարգացման մեջ մի փոքր շարժ կա: Եվ չնայած դրան, Ջերմուկի զբոսաշրջության պլանավորման մեջ առանձնակի առաջընթաց չի գրանցվել, ներդրումներ չեն արվել զբոսաշրջիկների համար նախատեսված հարմարություններում և ընդհանուր առմամբ ենթակառուցվածքում, որոնք հետագա զարգացման նախադրյալներ կարող էին հանդիսանալ:

---

<sup>25</sup> ԱՄՆ ՄԶԳ (2008թ) Զարգացման համապարփակ պլան. Ջերմուկը՝ որպես Առողջարանական և ձմեռային զբոսաշրջության կենտրոն

#### **4.17.10 Բնական պաշարների օգտագործումը**

Խոտաբույսերի հավաքը թե սպառման, թե բժշկական նպատակների համար իրականացվում է յուրաքանչյուր գյուղական համայնքում (տես Հավելված 4.17.1): Թե Գորայքի, և թե Կեչուտի բնակիչները փոխանակում են բաց դաշտերում հավաքած խոտաբույսերն ու սնկերը գյուղատնտեսական այն մթերքի հետ, որը չկա իրենց տարածքներում (օրինակ՝ մրգեր և ընկույզ):

#### **4.17.11 Ձկնորսություն**

Ժամանցային ձկնորսությունն իրականացվում է Որոտան գետում և Սպանդարյան ջրամբարում: Կենսակերպի ապահովման նպատակով ձկնորսության ոչ մի դեպք չի գրանցվել: Գնդեվազից դեպի արևմուտք, հիդրոէլեկտրակայանից (ինչպես նաև Կեչուտի ջրամբարից) հոսանքն ի վար առկա է երկու ձկնաբուծարան, ինչպես նկարագրված է Բաժին 4.9-ում:

#### **4.17.12 Տնտեսական այլ գործունեություններ**

Յուրաքանչյուր գյուղական համայնքում գործում են փոքր արհեստանոցներ, որոնք ատաղձագործական, մեխանիկական, սանտեխնիկական և շինարարական ծառայություններ են տրամադրում:

Դրամական փոխանցումներն ու կենսաթոշակները նույնպես նպաստում են ուսումնասիրության տարածքի տեղական տնտեսությանը: Դրամական փոխանցումներից ստացված ներդրումները տատանվում են գյուղական և քաղաքային համայնքներում. Գորայքում և Սարավանում դրամական միջին ամսական փոխանցումները 30 000 ՀՀ դրամից (72 դոլար) քիչ են: Գնդեվազում և Ջերմուկում դրական մասնական փոխանցումները մի փոքր բարձր են, սակայն այդ տվյալները չեն վավերացվել:

63 և բարձր տարիքի բոլոր անձինք իրավունք ունեն պետական կենսաթոշակ ստանալու, իսկ 25 տարի (և որոշ դեպքերում նաև դրանից էլ քիչ) աշխատանքային ստաժով բոլոր անձինք իրավունք ունեն ստանալու երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ: Կան նպաստների մի շարք այլ տեսակներ, օրինակ՝ զինվորական կենսաթոշակ-առողջության կենսաթոշակ և հատուկ կենսաթոշակ: Կենսաթոշակի մեկից ավելի տեսակ ստանալու իրավունք ունեցող մարդը կարող է իր համար ամենաշահավետ տեսակն ընտրել:

<b>Աղյուսակ 4.17.9 Ուսումնասիրության տարածքի կենսաթոշակատուները*<sup>26</sup></b>					
<b>Բնակչություն</b>	<b>Գորայք</b>	<b>Սարավան</b>	<b>Գնդեվազ</b>	<b>Ջերմուկ և Կեչուտ</b>	<b>Հայաստան</b>
<b>Կենսաթոշակատուներ</b>	54	30	145	1015	509,312
<b>Դե յուրե բնակչություն</b>	418	282	899	7542	3.274 mln
<b>%</b>	12,9%	10,6%	16,5%	13,5	15.7%

Գորայքում, Գնդեվազում և Սարավանում կենսաթոշակատուների փաստացի տոկոսն ավելի ցածր է, քան ազգային միջինը (տես Աղյուսակ 4.17.9), սակայն ուսումնասիրության տարածքում հետազոտություններն ու հարցազրույցները պարզեցին կենսաթոշակներից, ինչպես նաև պետական այլ նպաստներից կախվածության բարձր աստիճան:

Հայաստանում միջին ամսական կենսաթոշակը 2009թ. կազմում էր 24 520 ՀՀ դրամ, իսկ 2011թ.՝ 27,062 ՀՀ դրամ: Համաշխարհային բանկի ուսումնասիրությունը<sup>27</sup> Հայաստանի աղքատության շեմը մեկ մեծահասակ շնչի համար սահմանեց ամսական 30,920 ՀՀ դրամին համարժեք (74 դոլար)<sup>28</sup>: Ընդհանուր առմամբ ազգակից ընտանիքները հոգում են տարեց մարդկանց մասին, ում հարազատները գաղթում են սեզոնային աշխատանքների համար:


**4.17.13 Կենսակերպի գործունեությունից ստացված եկամուտը**

Ուսումնասիրության տարածքում միջին ամսական եկամուտը ամփոփված է Նկար 4.17.11 ում. Ջերմուկի ու Կեչուտի բնակչությունը ավելի բարձր եկամուտ վաստակող ամենաբարձր համամասնությունն ունեն: Գյուղական համայնքներում որակական և քանակական տվյալները վկայում են, որ գյուղատնտեսությունը կենսակերպի գերիշխող տնտեսական գործունեություն է:

<sup>26</sup> Տվյալները վերցված են համայնքների ղեկավարների կողմից հավաքված և կազմված «Գյուղերի անձնագրերից», 2015թ.

<sup>27</sup> Համաշխարհային բանկ, (2011) Չայաստանում աղքատության պատկերի վերլուծության թարմացում՝ կիրառելով աղքատության վերանայված շեմը: Եվրոպա և Միջին Ասիա

<sup>28</sup> Աղքատության շեմի նախքին զամբյուղը (2004) կազմում էր 25,877 ՀՀ դրամ:



Նկար 4.17.11. Գյուղական համայնքների միջին ամսական եկամուտ (2010թ.)<sup>29</sup>


Հաշվի առնելով ուսումնասիրության տարածքում եկամտաբեր գործողությունների մեծ մասի ոչ պաշտոնական բնույթը, եկամուտների գնահատականներն առաջացել են մոտավոր գնահատումներից և ինքնահայտարարված տվյալներից: Գնդեվազում ծիրանի արտադրության եկամուտը գնահատվել է որպես գյուղական համայնքներում գործող միակ կոմերցիոն մշակման գործունեության տեսակ: Գնդեվազում հարցված բնակչության մոտավորապես 60%-ը նշել է, որ սեզոնին ծիրանի մշակումից ստանում են 100 000 ՀՀ դրամից պակաս ամսական եկամուտ:

Նկար 4.17.12-ը ցույց է տալիս գյուղական համայնքներում անասնապահական գործունեությունից ստացված ինքնահայտարարված տարեկան եկամուտները: Հաշվի առնելով այս գործողությունների սեզոնային բնույթը, հավանական է, որ տվյալ եկամուտը ստացվում է ամռան ամիսներին: Սեզոնային հովիվների հետ Էկոհամակարգի ծառայությունների նպատակային խմբի անցկացրած քննարկումներից պարզ է դառնում, որ հովիվների եկամուտները ցածր են, և, ներկայումս գոյատևելու համար<sup>30</sup> պահանջվում է ավելի շատ ընտանի կենդանիներ պահել, քան անցյալում: Հովիվները նշում են, որ իրենք ստանում են մոտավորապես 1700 ՀՀ դրամ (4.20 ԱՄՆ դոլար) իրենց պահած

<sup>29</sup> Նույն աղբյուրից, 10, և նույն աղբյուրից, 12,

<sup>30</sup> Հարցազրույցի մասնակից հովիվները նշել են, որ նախկինում 20 խոշոր եղջերավոր անասունը բավական էր լավ ապրուստ ապահովելու համար, իսկ այժմ նույն կենսամակարդակն ապահովելու համար անհրաժեշտ է 30 կամ 40 խոշոր եղջերավոր անասուն:


անասունների մսի մեկ կիլոգրամի դիմաց, երբ շուկայական գինը կազմում է մոտավորապես 2500-3000 ՀՀ դրամ (6.15-7.40 ԱՄՆ դոլար) մեկ կիլոգրամի դիմաց:



**Նկար 4.17.12. Ուսումնասիրության տարածքում անասնապահությունից ստացված տարեկան եկամուտը<sup>31</sup>**

Հետազոտության արդյունքները վկայում են, որ ուսումնասիրության տարածքը հիմնականում ներկայանում է ցածր եկամտի գոտի, և Նկար 4.17.13-ը նշում է համայնքների ինքնագնահատված ֆինանսական կարողությունները: Այս գնահատումը չի ներառում սեզոնային հովիվների ֆինանսական կարողությունները, այնուամենայնիվ հարցազրույցների միջոցով հասկանալի է, որ տվյալ խումբը տնտեսապես խոցելի է զգում իրեն:

<sup>31</sup> Նույն աղբյուրից, 10, 4.17.7



Նկար 4.17.13. Ֆինանսական կացության ընկալումը <sup>32</sup>

**4.17.14 Հմտություններ**

Լիդիանի կողմից 2011թ. և ևս մեկ անգամ 2014թ. (հայաստանյան խորհրդատվական ընկերության կողմից՝ MPG) ուսումնասիրության տարածքում անց է կացվել աշխատանքային հմտությունների աուդիտ:

Աղյուսակ 4.17.10-ը ամփոփում է ուսումնասիրության տարածքում, 2011թ., գյուղական համայնքներում առկա ինքնահայտարարված հմտությունները, որոնք կարող են պիտանի լինել Ամուլսարի ծրագրի համար: Ջարմանալի չէ, որ այս համայնքներում ծրագրին անմիջապես առնչվող հմտություններին տղամարդիկ ավելի շատ են տիրապետում, քան կանայք:

<sup>32</sup> Նույն աղբյուրից, 10, և նույն աղբյուրից. 12,


Աղյուսակ 4.17.11. Ինքնահայտարարված հմտությունները ուսումնասիրության տարածքում (2011թ.) <sup>33</sup>						
Ընդհանուր հմտություններ	Գորայք (%)		Սարավան (%)		Գնդեվազ (%)	
	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին
Ընդհանուր մեխանիկական	93.8 %	-	52.2%	-	81.1%	4%
Կռունկավար	12.5%	-	34.8%	-	-	-
Էքսկավատոր	31.3%	-	13.0%	-	11.3%	-
Բուլդոզերավար	33.3%	-	17.4%	-	13.2%	-
Բեռնիչ	29.2%	-	21.7%	-	18.9%	-
Բեռնատարի վարորդ	66.7%	-	21.7%	-	18.9%	-
Եռակցող	45.8%	-	60.9%	-	58.5%	-
Սղոցավար	-	19.4%	-	15.8%	-	24%
Այլ օպերատոր	37.5%	-	-	-	9.4%	-
Շինարարության բանվոր	79.2%	-	87%	15.8%	79.2%	-
Էլեկտրիկ	75.0%	-	91.3%	42.1%	-	-
Ատաղծագործ և աղյուսագործ	37.5%	-	52.2%	10.5%	43.4%	-
Ինժեներ	6.3%	3.2%	-	26.3%	35.8%	-
Բուժքույր	-	6.5%	-	26.3%	-	12%
Հաշվապահ	-	9.7%	-	15.8%	-	16%
Խոհարար	-	19.4%	-	15.8%	-	12%
Այլ	-	38.7%	17.4%	26.3%	-	28%

Աշխատանքային հմտությունների հետազոտման ժամանակ ուսումնասիրվել են Ամուլսարի հանքավայրում տարբեր ֆունկցիաների համար պահանջվող հմտությունները և դրանց առկայությունը համայնքներում: Հարցման բազմաթիվ մասնակիցներ նշել են, որ տիրապետում են մեկից ավելի հմտության: Վերը բերված աղյուսակը պետք է դիտել որպես համայնքում առկա հմտությունների ամփոփում, որոնք առնչվում են հանքավայրում առաջարկվող աշխատանքներին, և ոչ թե համայնքում այդ հմտություններով մարդկանց քանակին:

2014թ. Հունիսին հմտությունների հետազոտության 844 լրացված հարցաթերթիկներից

<sup>33</sup> Տվյալները վերցված են Գեոթիմի կողմից 2011թ. հմտությունների ուսումնասիրությունից և ներառված են որպես Հավելված 4.17.2

երկուսում նշված էր, որ հարցվողների ամենաբարձրագույն կրթությունը՝ հիմնական դպրոցն է: Մեծամասնությունը (մոտավորապես 39%) նշել են, որ իրենք ավարտել են միջնակարգ դպրոց, իսկ յուրաքանչյուր հինգերորդն (19%) ունի բարձրագույն կրթություն (չորս տարվա համալսարանական աստիճան կամ ավելի բարձր): Հատկանշական է, որ բոլոր գյուղերում բարձրագույն կրթությամբ հարցվողները կազմել են հարցման մասնակիցների զգալի մասը (Գնդեվազ 14%, Գորայք 19%, Ջերմուկ 21%, Կեչուտ 12% և Սարավան 24%), ինչը ընդգծում է կրթության կարևորությունը Հայաստանի բոլոր համայնքներում (տես Նկար 4.17.14)



Նկար 4.17.14. Հարցվողների կրթական աստիճանը համայնքներում<sup>34</sup>

Կրթական նվաճումը լավ հիմք կծառայի նոր դերերի համար վերապատրաստվելու գործընթացում:

Քանի որ Ամուլսար ծրագրի աշխատանքային լեզուն լինելու է անգլերենը, անհրաժեշտ է նշել, որ հետազոտությանը մասնակցող հարցվողների մոտավորապես 10%-ը նշել են, որ տիրապետում են անգլերեն լեզվի գրավոր, խոսակցական և ընթերցման լավ կամ մասնաճիտական մակարդակի (2 մաքսիմալ կարգեր): Խոսակցական անգլերենը պարտադիր նախապայման չէ ծրագրում դերերի մեծ մասի դեպքում, սակայն առավելություն կդիտվի աշխատանքի անհատական որոնումների ընթացքում:

Հմտությունների հետազոտության շրջանակներում հարցվողներին խնդրել էին նշել, թե արդյոք իրենք տիրապետում են հանքային արդյունաբերությանն առնչվող հատուկ


<sup>34</sup> Տվյալները վերցված են MPG-ի կողմից իրականացված Հմտությունների ուսումնասիրության նախնական վերլուծությունից (2014թ.)



հմտությունների և նշել հմտություններին տիրապետելու աստիճանը: Ստորև բերված տվյալները ներկայացնում են հարցվողների համամասնությունը, որոնք զեկուցել են կոնկրետ ոլորտներում հմտություններին տիրապետելու լավ կամ մասնագիտական աստիճանի մասին:

- 7% ջրմուղագործեր
- 6.5% էլեկտրիկներ
- 6.5% ատաղձագործեր կամ քարտաշության հմտությունների տիրապետողներ
- 6.5% եռակցողներ
- 11% շինարարական փորձ ունեն կամ կառավարարներ
- 12.5% հաշվապահներ
- 8% մասնագիտական մաքրման փորձ
- 10% սննդի սպասարկման մասնագիտական փորձ
- 3% կռունկի օպերատոր
- 3% առվափորեր
- 3% էքսկավատորի օպերատոր
- 4.5% բուլդոզերի օպերատոր
- 4% բեռնողի օպերատոր
- 7.5% բեռնատար մեքենայի վարորդներ

Հետազոտության արդյունքում հայտնաբերվել է տարբեր կարգերի վարորդական իրավունքներ ունեցող մարդկանց քանակը (տես Նկար 4.17.15)



Նկար 4.17.15. Վարորդական իրավունքի կարգը և տոկոսային քանակը<sup>35</sup>

Հարցվողների մոտավորապես 38% նշել են, որ ներկայումս աշխատում են և ստանում աշխատավարձ: Դրանց 5% նշել է նաև, որ իրենք անհատ ձեռնարկատեր են: Հարցման մասնակիցների մեծ մասը (48%) նշել են, որ իրենք ներկայումս գործազուրկ են: Հարկ է նշել է, որ հարցվողների 75% նշել են, որ անցյալում որոշ ժամանակ աշխատել են: Ծրագրի զարգացման համատեքստում, համայնքում ներկայումս գրանցված բարձրագույն կրթության աստիճանները և հմտությունների բազմազանությունը պետք է հնարավորություններ ստեղծի տեղական համայնքի բնակիչների համար՝ ծրագրում աշխատանք գտնելու նպատակով: Աղյուսակ 4.7.11.ում ներկայացված է տեղական համայնքներում զբաղվածության կարգավիճակը՝ նշելով ներկայումս տարածքում առկա գործազրկության բարձր մակարդակը:

Աղյուսակ 4.7.12 Հմտությունների հետազոտության նախնական արդյունքներ – Չբաղվածության կարգավիճակ <sup>36</sup>							
	Աշխատա վարձով աշխատանք	Անհատ ձեռնարկա տերեր	Խնամառու ների խնամող	Սեզոնա յին աշխա տանք	Այլ	Ապրելու միջոցներ կամ տարրական	Ներկայումս գործազուրկ

<sup>35</sup> Նույն աղբյուրից. 31, 4.17.28

<sup>36</sup> Նույն աղբյուրից. 31,

						հողագործո ւթյուն	
Գնդեվա Ղ	40%	4%	3%	2%	1%	12%	37%
Գորայք	44%	2%	0	12%	3%	7%	32%
Ջերմուկ	38%	6%	2%	<1%	1%	<1%	53%
Կեչուտ	29%	5%	8%	5%	0	5%	48%
Սարավ ան	45%	0	0	13%	0	5%	37%